

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻ ՎԻՊԱԳՐՈՒԹԻՒՆ. ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ (karine.rafaelyan@mail.ru)

ՄՈՒՏՔ

Անկախության շրջանը հայ գրականության համար բացեց նոր թեմաների, նոր ասելիքի, նոր որոնումների դաշտ, որի դրսևորումները բազմաբովանդակ եղան տարբեր գրողների ստեղծագործություններում: Իհարկե, իսկական արժեքների գահատականը որոշում է ժամանակը, սակայն գրականությունն իր ծննդեան պահից էլ ստանում է որոշակի գնահատական թե՛ մասնագետների, թե՛ ընթերցողի կողմից:

ՀՀ անկախության տարիները համընկան համաշխարհային այն միտումներին, որոնք վերանայում էին ծառայուն, երկարաշունչ խօսքի նշանակությունն ու նախապատուությունը տալիս հակիրճ, առցանց տիրոջի հաղորդագրությունների յատուկ զեղարուեստական ձևերին: Այս միտումը ազդեց նաեւ անկախության շրջանի գրողներին եւ գրականության: Եղան ոմանք, որոնք ստեղծագործեցին այդ ոճով: Այդ ոճի ամենավառ ներկայացուցիչն է Յովհաննէս Թերգեօզեանը (ծն. 1974): Թերեւս, Յովիկ Աֆեանը (ծն. 1983), Արամ Ալավերդեանը (ծն. 1960) եւս նման սկզբունքներով են ստեղծագործում: Եղան եւ հայ գրողներ, որոնք չլքեցին ստեղծագործելու ամանդական անդաստանը եւ, ի հեճուկս ժամանակակից գրական նորածնությունների, հայ գրականության գանձարանը հարստացրին ստոարածաալ վիպական երկերով: Բոլորի անունները հնարաւոր չէ թուարկել, իհարկե, այնուամէնայնիւ նշենք միքանիսին՝ Լեւոն Խեչոյեան (1955-2014), Գուրգէն Խանջեան (1950), Ալիս Յովհաննիսեան (1946), Սուսաննա Յարութիւնեան (1963), Նորայր Ադալեան (1936), Ալեքսանդր Թոփչեան (1939), Հովիկ Վարդումեան (1940), Արամ Պաչեան (1983), Հրաչեայ Սարիբէկեան (1979) եւ էլի ուրիշներ: Յիրաւի, անկախության տարիներին ստեղծուեց եւ շարունակոււմ է ստեղծուել մնայուն գրականութիւն՝ տաղանդաւոր գրողների գրչով: Այդ գրողների մէջ իր ստեղծագործական բեղմնաւոր հունձքով առանձնանում է Վահագն Գրիգորեանը, որի վիպագրութիւնն անկախության տարիներին անշեղօրէն կառուցոււմ է հայի ու Հայաստանի բախտորոշ խնդիրների առանցքում¹:

¹ Վահագն Գրիգորեանը ծնուել է 1942 Մարտի 27ին, Երեւանում: Աւարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտէտը: Որպէս հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչ աշխատել է Կոտայքի մարզի Մեղրաձոր գիւղի միջնակարգ դպրոցում, 1966-68՝ «Հայաստան» հրատ.ում, 1968-74 եւ 1978-82՝ է Պիոնէր (այժմ՝ Աղբիւր) ամսագրի պատասխանատու քարտուղար, Հայաստանի Գրողների Միութեան վարչութեան քարտուղար (1986-94): Ապրում է Լիտուայում:

Գրիգորեանը իր հայեացքից բաց չի թողնում ոչ միայն իր ազգի եւ հայրենիքի խութաշատ ներկան, այլեւ պրպտում-զննում է հեռաւոր անցեալն ու կանխագուշակում ապագան: Նրա գրականութիւնը զերծ չէ պատմականօրէն մեզ պարտադրուած ողբերգութիւններից սնուող յոռետեսութիւնից, ներկայի աններելի սխալների առաջ բերած ցասումից, բայց եւ սա գրականութիւն է, որը եթէ ոչ իրապատում, ապա երեւակայական շերտերում յուսադրումի անխախտ հաւատն է հնչեցնում: Մեր ուսումնասիրութիւնը ծաալուել է Գրիգորեանի՝ անկախութեան տարիներին գրած չորս վէպի շուրջ, որոնց կ'անդրադառնանք առանձին-առանձին:

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՄԱՀԸ

Առաջնորդի կեանքն ու մահը երգիծական վէպ է: Գրուել է 2001ին, լոյս տեսել 2006ին: Այն կառուցուած է զաւեշտի յենքով, սակայն սա չի նշանակում, որ չպէտք է իրատեսական տագնապով վերաբերուել այս վէպի հետ: Վէպում Գրիգորեանը չափազանց ուղղագիծ է կառուցում իր պատումաշարը՝ ի տարբերութիւն *Ժամանակի գեպը*, *Պօղոս-Պետրոս* վէպերի: Ողջ պատումը առաջ են մղում երկու կերպար՝ Վասիլի Իւանիչը եւ նրա վարորդը՝ Պետիան: Վերջինիս յուշերի շրթան էլ հենց կառուցում է վէպը՝ համեմուած նրա դատողութիւններով եւ եզրայանգումներով: Վէպը հիւսում է երկխօսութիւնների եւ յիշողութեան երկարուձիգ թէլի հիմքով: Իւանիչ, Պետիա անուններն ընտրուած են ոչ-պատահաբար. այս անուններով զոյգը յայտնի է խորհրդային քաղաքական կեանքի մէջ՝ մին իբրեւ յեղափոխական զօրավար, միւսը՝ վերջինիս համհարզը: Եւ հակառակ խորհրդային գաղափարախօսութեան նրանց վերագրած հերոսականութեան, այդուամէնայնիւ, ժողովրդական գրոյցներում սրանք առաւել յայտնի են իբրեւ զաւեշտալի պատմութիւնների պարզամիտ հերոսներ:

Վէպի կենտրոնական առանցքը, ընթացքը՝ կուսակցութեան առաջնորդ Իւանիչն է՝ իր քաղաքական հայեացքների անբռնազբօս ու տարօրինակ շողարձակումներով, որոնք թէեւ միանգամայն անյարիր են առողջ բանականութեանը, սակայն "հիմնատրում են" պատմողի՝ Պետիայի համարժէքօրէն անհեթեթ մեկնաբանութիւններով:

Վէպի հերոսներն ասես մրցակցում են միմեանց հետ՝ ջանալով մէկմէկու գերազանցել իրենց արտառոց որակներով: Սրանք կամ նախկին խորհրդային պաշտօնեաներն են, կուսակցականներն ու կուսակցապետերը՝ իրենց ժամանակավրէպ գոյութեամբ, կամ վերջիններիս տգէտ նոփրեալները, ինչպէս Պետիան, որ ընդամէնը կուսակցապետի վարորդ է՝ պատահականութեան ու կոյր հաւատարմութեան բերումով:

Այս մարդկանց ուղղորդողը պարզ հաշուարկն է՝ անձնական շահը, մաքիաւելական բացատրութեմբ՝ «... *ինչպէս յաւերժական բարեկամներ*

չկան, այնպես էլ յաւերժական թշնամիներ: Կան յաւերժական շահեր՝ ահա միակ մնայուն բանն այս աշխարհում»²: Այս նշանաբանով է ապրում Իւանիչը: Իսկ շահը միշտ գործողութիւնների նոր բանաձեւեր արտաձեւելու հրամայականն է հնչեցնում: Ահա մէկը դրանցից, որը Պետիան վերապատմում է "առաջնորդի" մտքի գոհարների ծիրում՝ մէջբերելով Իւանիչի ծրագրային դատողութիւնները. «"Սառը ցնցուղի քաղաքականութիւն" ծածկանունով քանդելու ծրագիրը փոյ առ փոյ պիտի իրականացուէր: Առաջին փուլը կոչում էր "տեսական ցնցումներ", երկրորդը՝ "քառս", երրորդը՝ "կործանում", չորրորդն էլ, պարզ է, "փիւնիկ" պիտի կոչուէր»³:

Հասկանալի է, որ վիպական պատումը չի հասնում մինչեւ "փիւնիկ"ի ժամանակաշրջանը, սակայն դրան նախորդող մնացած բոլոր շրջափուլերը ընթերցողը "վայելում է" լիովի:

Յանուն ժողովրդի նոյն այդ ժողովրդին պատուհասելու մոլագարութիւնը դժուար է ձեւակերպել աւելի դիպուկ նկարագրութեամբ, քան անում է Գրիգորեանը: Ոչ մի խտրութիւն՝ յանուն նպատակի ընտրուած միջոցների մէջ. սա վէպի բոլոր հերոսների անշեղ ուղենիշն է: Այդ թեմայով զտանցողների մէջ ամէնից շլացնողը Իւանիչի մտքի փայլատակումներն են. օրինակ՝ «...մեր խօսքն էլ, նպատակն էլ ծայրաստիճան ազնիւ են: Մենք, ի տարբերութիւն միւս կուսակցութիւնների, ժողովրդին խաբում ու օգտագործում ենք յանուն ժողովրդի: Հասկանում ես, որպէսզի ժողովրդի համար լաւ լինի, մենք պէտք է գանք իշխանութեան գլուխ, իսկ որպէսզի մենք գանք իշխանութեան գլուխ, ժողովուրդը իր ձայնը մե՛զ պիտի տայ, իսկ որպէսզի մեզ տայ, մե՛նք պէտք է խաբենք ու օգտագործենք ժողովրդին»⁴:

Ահաասի՛կ յանուն իշխանութեան, յանուն նախագահական աթոռի ամէն քայլի պատրաստ հերոսի կենսափիլիսոփայութիւնը: Եւ այս կենսափիլիսոփայութեան մարմնացման ճանապարհին հարկաւոր է պատրաստուել երկար ու հանգամանալից, մշակելով ճշգրիտ մարտավարութիւն: Եւ գործի են դրում Պետիայի աճպարարութիւնները: Վարորդը երկակի խաղեր է սկսում իր տիրոջ համար անցանկալի անձանց հետ, որի արդիւնքում այդ անցանկալիները վերածում են թշնամիների, ոչնչացնում միմեանց, եւ ասպարէզը դատարկում է՝ լիովին յանձնուելով Իւանիչին:

Յետոյ գալիս է նոր քայլը. համաժողովրդական հաւաքի ծրագիր է յղանում տաղանդաւոր կուսակցապետը՝ անհետեթե՞ կարգախօսով՝ «Աշխատողի եւ գործազուրկի համերաշխութեան օր»: Փողոց դուրս եկողները անտուն-քաղցած թափառաշրջիկներ-հոգեբուժարանից դուրս պրծած

² Վ. Գրիգորեան, *Առաջնորդի կեանքն ու մահը*, Նայիրի հրատ., Երեւան, 2006, էջ 52 (վէպի յետագայ քաղուածքները՝ այստեղից):

³ Նոյն, էջ 67:

⁴ Նոյն, էջ 25:

մտազարներ են. սա է Իւանիչի ընտրագանգուածը, ինչպէս նաեւ միքանի գրոշով վարձուած "համակիրները", որոնք ամէնօր եւ ամէն ժամ նոյն դերի մէջ են՝ առաւել թոյլ կամ հնչեղ ինքնադրսետրումներով:

Բայց ամէն բան այս անմեղ ձեռնարկումների սահմաններում չի պարփակուած: Կան ապագայի առաւել փայլուն ծրագրեր, որոնց իրականացման ճանապարհին սարսափելի չեն ոչ մի խուֆ ու խոչընդոտ: Եթէ պէտք է՝ կարելի է եւ օտարին յանձնել հայրենիքը...քծնել արեւմուտքից կամ Ռուսաստանից ժամանած բարերարներին (ըստ որում՝ տրամաբանօրէն լիովին հակադիր համոզումների ու վարքի դրսետրումներով)...լինել Հայ Եկեղեցու միասնականութեան ջատագով...բանաձեւել այդ եկեղեցու պառակտումը...աստուածացնել ռուս ազգն ու նրա պետական-քաղաքական գործիչներին...քամահրանքով այպանել նրանց անձն ու գործը, գերապատուութիւնը տալով հայազգի Հայկ Բժշկեանին...կործանել երկիրը, քանդել հոյակերտ շինութիւնները...: Բայց ո՛չ, յանկարծ մեծ մտածողը ետ է կանգնում այս վերջին գաղափարից: Ինչու՞: Երկաթէ տրամաբանութիւնը կառուցում է դրա հիմնատրումը. շէնքերը չի կարելի քանդել, որովհետեւ երկար ժամանակ է պահանջուել դրանք կառուցելու համար, իսկ մա՞րդը, ի՞նչ մի մեծ արժէք է նա, չէ՞ որ մարդ արարելու համար միքանի ընդհանր էլ բաւական է: Եւ ուրեմն, շէնք-շինութիւնների մեծարժէքութեան հանճարեղ դատողութիւններին ի հակակշիռ՝ ծնում է մէկ այլ հանճարեղ միտք. եթէ պէտք է՝ կարելի է ոմբահարել ժողովրդին, իհարկէ՝ ի բարօրութիւն նոյն այդ ժողովրդի: Այս վէպի հերոսները միայն իրենց կենցաղով են տեղորոշուած ԻԱ. դարի մատոյցներում, իսկ մնացեալ հարցերում գրեթէ նախամարդու բնագոյների, ստրկատիրական հասարակարգին յատուկ բարքերի պարզ վերարտադրողներ են, քաղաքական պայքարի մարտավարութեան մէջ՝ առաւել եւս: «Ես հաւատ չեմ ընծայում այս թաւշեայ յորջորջուած յեղափոխութիւններին, որոնք, կը ներես, մի քիչ նման են ձեռնաշարժութեան, իսկ թէ մի բան էլ ծնում են՝ այսպիսի հաշմանդանների, ինչպիսին մեր թշուառ երկիրն է: Իզուր են մեզ աջից ու ձախից հաւատացնում, թէ արիւնահեղ յեղափոխութիւնների դարն անցել է: Եթէ անգամ անցել է, մենք երբ կը բերենք այն»⁵ բարբաջում է հայաստանեան քաղաքական դաշտում գործող հայ նախագահացուն:

Թաւշեայ յեղափոխութիւններին ձեռնոց նետելու հիմնատրումը եւս ունի այս մարդը, նրա մտասեւեռումները կասկածի տեղ չեն թողնում.

... սրանց բռնած ճանապարհը ժողովրդին վերջնականապէս կը բարոյագրկի, կը դարձնի ճրիակեր՝ տեղում հանգիստ նստած մի օր այս պիտի ստանայ, մի օր այն եւ, Աստուած մի արասցէ, մի օր իսկապէս լաւ ապրի: Ու՛մ է պէտք, ասա ինձ, ամէն ինչ ունեցող, լաւ ապրող ժողովուրդը: Կամ մենք պէտք կը գա՞նք

⁵ Նոյն, էջ 102:

հաստաքամակ ժողովրդին, ինչքան էլ իր նուիրական իղձերի միակ արտայայտիչը լինենք⁶:

Թէ որն է այս արկածախնդրի եւ նրա նմանների պատկերացմամբ ժողովրդի նուիրական իղձը՝ հեղինակն այդպէս էլ չի պարզաբանում: Փոխարէնը վիպական պատումը կառուցում է գլխատր հերոսի նուիրական իղձը երեւան հանելու եւ դրա իրագործմանն ուղղուած սեւեռուն ընթացքը լուսաբանելու վրայ: Իսկ ընթացքն այդ, ինչպէս եւ կուսակցութեան ժամանակագրութիւնը աճապարարութիւնների անվերջանալի շղթայ է, որում կարեւորագոյն գործօնը փողն է: Փողը Իվանիչի համար իր ազգափրկիչ վեհ առաքելութեան՝ նախագահական ընտրարշատում յաղթելու մտասեւեռումի շարժիչ ուժն է. *«Թող բացեն (գրպանները - Կ.Ռ.), մեզ համար ճանապարհ հարթեն դէպի նախագահական աթոռ, իսկ նախագահները, գիտես, սովորական մահկանացուներից փարբերում են նրանով, որ երբեք չեն իրականացնում իրենց խոստումները, առնուազն ընտրարշաւի ժամանակ տուած: ...փողի տեսակէտից, մեր ընտրարշաւը, կարելի է ասել, սկսել ենք: Յաղթական ընտրարշաւը, Պետիա, որովհետեւ ... շիրակ խօսենք՝ յաղթելու համար փողից բացի մեզ ի՞նչ է պակասում: Ոչինչ»⁷:*

Գրիգորեանը, թերեւ, կարեկցում է մեզ՝ վէպի ընթերցողներին, եւ իր հերոսին չի հասցնում մինչեւ նախագահական գահը: Բազում ծամածռութիւններից ու գործարքներից յետոյ այս ազգափրկիչը որոշում է յագուրդ տալ իր առնական բնազդներին՝ ոչ առանց Պետիայի գործուն մասնակցութեան: Եւ...վիպասանը պարզապէս անառակութեան մահճում սպանում է այս խեղկատակին՝ թոյլ չտալով նրան անգամ որպէս արու կայանալ իր զուգակցի աչքում: Առաջնորդի մահուան այս կերպը պատահական չի ընտրուած: Նրա տղամարդկային անկարողութեան փաստը եւ մահուան խայտառակ հանգամանքները այլաբանօրէն հանգուցալուծում են քաղաքական առաջնորդի վախճանը: Սա ակնյայտ յուշում է, թէ այսպիսի առաջնորդ ունենալու պարագայում որեւէ ժողովուրդ չի կարող այլ հեռանկարի յոյս ունենալ, քան Իանիչի նման իր խայտառակութիւնն ու անկարողութիւնը վաւերացնող մահը: Բայց եւ դժուար է ասել, թէ հեղինակը լաւատես է, քանզի ինչպէս քաջնազարների, շուարցեան վիշապների դէպքում, այս վէպում էլ *«սուրբ տեղը դափարկ չի մնում»*, եւ Իանիչի ցանաճ փուչ սերմերը... ծլարձակում են: Նրա ասանդաճ դասերն ու գործը շարունակւում են աւելի խայտառակ կերպով. Պետիան հիմնադրում է իր Ղեկ Կուսակցութիւնը եւ դառնում թարմ ու պահանջուած դէմք հասարակութեան կեանքում:

⁶ Նոյն, էջ 124:

⁷ Նոյն, էջ 347-48:

Եթէ վէպի հերոսներին, քաղաքական հոսանքներին եւ միատրոններին տրուած ոչ-պատմական, բայց թափանցիկ անունները կարող են ինչ-ինչ հիմքեր տալ՝ մտածելու, թէ սա ամէնեւին էլ հայկական իրականութեան եւ հայաստանեան մղձաւանջի գեղարուեստական արտապատկերը չէ, ապա Երեւանի կարեւորագոյն շինութիւններին Հանրապետութեան Հրապարակ, Գիտութիւնների Ակադեմիայի շէնք են.), ՀՀ այս ու այն մարզերին առնչուող յիշատակումների փաստագրական ճշգրտութիւնը ցրում է ամէն կասկած: Եւ ոչ-պատահականօրէն Սաֆարով ազգանունը կրող «հայրենանուէր» ռուսահայը նոյնպէս գրողի իրատեսութեան ցցուն արտայայտիչն է, քանզի մենք այս կերպարի տիրոջում կարող ենք գետնել մեզ այնքան ծանօթ որոշակի անձանց: ՀՀում գրեթէ իրաքանչիւր քաղաքական գործիչ նախընտրական իր քարոզարշաւի ընթացքում գործում է ճիշտ այն միջոցներով եւ վարքագծով, ինչ նկարագրուած է այս վէպում: Որեւէ հայաստանցու համար այս արտառոց թուացող պատմութեան դրուագները անձանօթ չեն եւ, վիպական որոշակի գունազարդումներով հանդերձ, հասկանալի են ու վաղուց օրինաչափ:

Սաֆարով ռուսահայի անունը միակը չէ, որ հենց ինքնին տեսակ է բնորոշում: Սա վերաբերում է գրեթէ բոլոր հերոսներին: Յատուկ անունները յաճախ չեն սահմանափակում անձնանունան շրջանակներում, այլ դառնում են փոխաբերութիւն, պիտակ, իրենցով իսկ բազում շերտեր բացում ներկայացուող կերպարի բնութագրում: Փարսխեան, Երիտքարտ, Գիտնական, Քաղկոմ, Քեառառեցի, Վետերան, Օրիորդ, Տիկնանց տիկին, Լաչառանց գումարտակ, Աֆղանստանցի, Խմբագիր, Հարուածային խումբ, Սեւադէմ փոշոտ, Սթափ քաղաքացի, Համերաշխութեան զինուոր, Տէր եւ Տիկին Բարեարներ, Որբեայրի, Սազանդար, Բողոքատու... կարելի է եւ շարունակել այս կերպարների թուարկումը, բայց արժի՞: Չէ՞ որ սրանք բոլորը մի խմորից են հունցուած, եւ նրանց բոլորի վրայ հնարատու է տարածել հանճարեղ առաջնորդի բարոյախօսութիւնը. «Մտածող մարդիկ քչացել են»: «Ես մտածում եմ, ուրեմն, ես ապրում եմ» սրբազան խօսքը մեզ է հասել հիմնովին այլանդակուած: «Ես ապրում եմ, ուրեմն, էլ ինչու մտածեմ»՝ ահա մեր տխուր ժամանակների նշանաբանը, ահա մեր՝ վերջին մտածողներիս, հատուկենտ վերջին մոհիկաններիս գլխին, չնայած մեր հպարտ արհամարհանքին ու գոռ խիզախութեանը, մշտապէս դաւադրաբար կախուած կեռ սուրը»⁸: Ինչպէս նկատում ենք, այս մարդիկ պարզապէս կանխադատապարտուած են անպատժելիութեան, քանզի անմեղսունակութեան պարագայում բացառուած է որեւէ դատ ու դատաստան: Սակայն մնում է պատասխանել հարցերի հարցին. իսկ ի՞նչ անի սրանց հոգածութեանը յանձնուած ժողովուրդը. չէ՞ որ Գրիգորեանի ցաւը

⁸ Նոյն, էջ 275-76:

հենց այս ժողովրդի ճակատագիրն է, որ այդպես էլ չի որոշակիանում: Եւ սա գրողի գրեթէ բոլոր ստեղծագործություններին յատուկ հանգուցալուծում է. աւարտ՝ չվերջակէտուող պատմութեամբ:

ԺԱՄԱՆԱԿԻ ԳԵՏԸ

Ժամանակի գեպը վէպը գրուել է 2005-08ին, լոյս է տեսել 2008ին: Այն պարզապէս գեղարուեստական երկ չէ, այլ փաստերի ու փաստաթղթերի յենքով ստեղծուած պատմական վաւերագիր, որով կարելի է դատաւարութիւն բացել Հայոց Յեղասպանութեան ոճրագործ հեղինակների ու նրանց նախահայրերի դէմ:

Ինչպէս *Պողոս-Պեպրոս* վէպում, այնպէս էլ այստեղ Վահագն Գրիգորեանը վիպական պատումին, իր գրական հերոսներին վիճակուած անօրինակ Գողգոթային զուգահեռ՝ մէջբերումներ է անում պատմական փաստաթղթերից՝ մամուլից, գիտական ուսումնասիրութիւններից, պաշտօնական նամակագրութիւնից, որոնք հաւաստիութեան առումով անխոցելի են դարձնում նրա պատկերած իրականութիւնը:

Վէպում կայ հոգեբանօրէն մշակուած, անվրէպ նշանառութեան ոգի, որով էլ հենց հեղինակը, ընթերցողին առինքնելով, իր ուղեկիցն է դարձնում, իր բացայայտումների ականատեսն ու վկան, յաճախ՝ հաստատողն ու խրախուսողը, համախոհը... Սրան նպաստող հանգամանքներից մէկը, իհարկէ, վաւերաթղթերի, ինչպէս նաեւ պատմական եղելութիւնների անխաթար վերարտադրումն է... Չկայ նկարագրութիւններից մի բան, որ իսկապէս տեղի ունեցած չլինի...⁹:

Վէպում դէպքերը, որտեղ էլ որ կատարուեն, հանգուցալուծում են Գրիգորեանի երկերի գործողութիւնների մշտամնայ կիզակէտ Տրդ փողոցում:

Տրդ փողոցը Գրիգորեանի ստեղծած գեղարուեստական կերպարներից մէկն է, որը կենդանի, շնչող, իրատեսակ բնատրութիւն եւ վարքագիծ ունեցող էակ է: Այս կերպարը շատ դէպքերում յիշեցնում է էպոսի այն մշտամնայ հերոսներին (ձէնով Օհան, Քեռի Թորոս, Յռան Վէգի), որոնք երբեք չեն դաւաճանում իրենց նկարագրին, երբեք չեն դադարում Սասնայ տան համար ճակատագրական պահերին ներկայ ու մասնակից լինելուց, երբեք չեն դառնում ժամանակավրէպ, չեն ծերանում, չեն մահանում, չեն դադարում լինել դիւցազնավէպի բոլոր ճիւղերում նկարագրուող գործողութիւնների մասնակիցը: Այսկերպ եւ Գրիգորեանն է ստեղծում Տրդ փողոցը՝ իբրեւ իր երկերի գործող անձ՝ սկսած 1989ին լոյս տեսած *Տրդ փողոց* ժողովածուից մինչեւ 2012ին լոյս տեսած *Ջարմանալի իրադարձութիւններ Տրդ փողոցում* ժողովածուով. երկուսում էլ ընդգրկուած են պատմուածքներ եւ վիպակներ, որոնց գործողութիւնների տարածքը նոյն Տրդ փողոցն

⁹ Ա. Յովհաննիսեան, «Ժամանակի տղմուտ գետն ըստ Վահագն Գրիգորեանի», *Ալիք օրաթերթ*, 14 Մայիս 2009:

է: Այնտեղ վճռում է ոչ միայն Գրիգորեանի երկերի հերոսների, այլև ողջ հայ ազգի ճկատագիրը, այնտեղ մարդրկ ոչ թէ պարզապէս ապրում են, այլ ձեւատրում իրենց ու հայ ժողովրդի բարոյ տարեգրութիւնը: Տրդ փողոցը, որն առաւել բազմաշերտ ու լայնածաւալ դրսեւորումներ է ստանում *Ժամանակի գեղը* եւ *Պողոս-Պեղրոս* վէպերում:

Պայմանական այս տարածութեան մասին իր ընդարձակ ուսումնասիրութեան մէջ գրականագէտ Ժենիա Քալանթարեանը զուգահեռներ է անցկացնում Գրիգորեանի Տրդ փողոցի եւ Ֆոլքլենի, Մարկէսի, Հրանտ Մաթեոսեանի գրական գործերից յայտնի տեղանքների միջեւ. «*Սկսած 1970ականների կէսերից՝ Գրիգորեանի սրեղծագործութիւնների գրեթէ բոլոր գործողութիւնները կատարում են Տրդ փողոցում: Կարծես իբրեւ հասարկացում այն բանի, որ պայմանական այդ տարածքը իր գեղարուեստական անձեռնմխելի "սեփականութիւնն է"*»¹⁰:

Ու թէի հեղինակը մօտաւորապէս նշագրում է այդ փողոցի տեղանքը Երեւան քաղաքի քարտէզի վրայ, այդուհանդերձ, Տրդ փողոցը պայմանական տարածք է, որի բնութագիրը չի առանձնանում երեւանեան միւս փողոցներից՝ խորքային իմաստով: Ամէնուր էր նոյն քառսն ու տառապանքի խրախճանքը, սակայն հենց այս փողոցում է սկսում զարշահոտել Ժամանակի գետը: «*Ժամանակի գետը հոսում է մեր Տրդ փողոցով: Զարմանալին, սակայն, մենք ենք, որ երկար ժամանակ դա չգիտէինք: Աչքներս բացուեց, երբ մեր փողոցը հերթական անգամ հանդերձափոխում էր: Ոմանց, իհարկէ, թուաց՝ ոչ թէ գետն է հոսում մեր փողոցով, այլ փողոցն ինքը ծայրէծայր մի մեծ ճահիճ է, եւ, պատկերացրէք, իրաւունք ունէին՝ գետից այն հոտը չպիտի գար, որ երբեմն մեր փողոցից էր գալիս*»¹¹:

Վիպական պատումը ծայր է առնում Տրդ փողոցի բնակիչ, գրեթէ 120ամեայ Հայկարամի մահուան ու հոգեհացի նկարագրութեամբ: Ժամանակի գետի զարշահոտութեան ակունքը նրան բոլորից լաւ էր յայտնի: Նա երկար էր ապրել աշխարհում՝ տեսնելով, մաշկով զգալով 1915ի արհաւիրքը, ընտանիքի, մերձատրոնների սահմուկեցուցիչ մահերը, գաղթը: Ապրել էր՝ աչքն ու ականջը մխիթարական լուրի, բայց մահացել թուրքի սանձարձակութեան ցցուն լուրն առնելով թերթում արուած հրապարակումից: Իսկ հրապարակումն անդրադառնում էր Յրդ հազարամեակի սկզբին թուրք պատմաբանների կազմակերպած 15րդ համագումարին: 1915ի ոճիրից տասնամեակներ անց արնախումբների ժառանգները Եւրամիութիւնում կազմակերպել էին գիտաժողով, որը պիտի ներկայացնէր օսմանեան երկ-

¹⁰ Ժ. Ա. Քալանթարեան, «Վ. Գրիգորեանի '5-րդ փողոցի' ծննդաբանութիւնը», *ՎԷՄ*, 2019:3:

¹¹ Վ. Գրիգորեան, *Ժամանակի գեղը*, Զանգակ, Երեւան, 2008, էջ 9 (վէպի յետագայ քաղուածքները՝ այստեղից):

րի հարուստ փորձը՝ ուղղուած Թուրքիայում բազմամշակութային ինքնութեանն ու զարգացմանը, ոչ-մահմեդականների իրաւունքների ու ազատութիւնների ապահովմանը: Համագումարի առթիւ հանդէս էին ելել ցեղասպան երկրի վարչապետն ու նախագահը՝ ի լուր աշխարհի արուած բարձրագոյ յայտարարութիւններով: Գրիգորեանը մէջբերում է թերթում տպագրուած այդ յայտարարութիւններից միքանիսը: Մասնաւորապէս՝ երկրի վարչապետն ասում է. «Պատմութիւնը թուրքից աւելի պարզերես ազգ չգիտի... Անհնար է, որ մեր պապերը յանցագործ եղած լինեն մեր պատմութիւնը երբեք մեր գլուխն ամօթով խոնարհելու առիթ չի տուել...: Քաղաքական նկատառումներով թուրքերի պատմութիւնը արատաւորելու փորձեր են արտում»¹²: Կարծես թէ պակաս տեղ չկայ այս խօսքերից տպատրուելու ու թուրք ազգի առջեւ գլուխդ խոնարհելու համար, եթէ արտայայտուելու լինենք Գրիգորեանի մաղձոտ հեգնանքի յանգոյն: Բայց եւ այնպէս, երկրի նախագահն էլ իր աղունն է լցնում վարչապետի ու վայ-պատմաբանների պտտոտղ ջրաղացին. «Յեղասպանութեան ճանաչման խնդրին ուղղուած որեւէ ջանք անկարող է ստուերել իրականութիւնը»¹³: Ահա եւ վերջ, այսքանը միայն: Եւ տասնամեակներ շարունակ ճշմարտութեան յաղթանակի սպասումով ապրած Հայկարամը, մահկանացուն կնքում է այս լկտի յայտարարութիւններով համեմուած լուրը թերթում կարդալիս:

Այս կէտից էլ ծայր է առնում Գրիգորեանի վիպական պատումը, բայց արձանագրենք, որ վէպն ունի միքանի սկիզբ ու միքանի աւարտ իր ներսում, ինչպէս եւ միքանի պատմող եւ գեղարուեստական միքանի ոճ: Հայկարամի մահուան թեմայից հեղինակն անցնում է մէկ այլ սկզբի՝ Վանից՝ Գալուստ Տէրգալուստեանի տանից, Խարբերդ՝ Գալուստ Տէրգալուստեանի տուն հարս գնացած գեղեցկուհի մանկամարդ Մարիամի ու նրա ներսում նոր-նոր թարտացող սաղմի՝ Գլակի ողիսականին:

Դէպքերի ելակէտը 1915ի արհաւիրքն է, որ վէպի հերոսներին դասակարգում է՝ ըստ իրենց գործառոյթների ու ճակատագրական դիպուածների: Եթէ թուրք մարդակերպների դէպքում որեւէ խաւի ներկայացուցիչ, որեւէ ժամանակի, որեւէ իրադրութեան մէջ իր կայուն հաւատամքն է ի յայտ բերում՝ ունեզրկել, տեղահանել, բնաջնջել հայերին եւ, իբրեւ պարգեւ, այս ազգանուէր ծառայութիւնների դիմաց ապահովել իր բարեկեցիկ կեանքն ու լուսատր ապագան, ապա հայի ճակատագիրը, այս հաւատամքին տրուած, ընդունում է տարբեր ձեւեր, ենթարկում զանազան խեղումների, բայց եւ անտրամաբանօրէն ձեռքից բաց չի թողնում գոյատեւումի անհնարին հնարաւորութիւնները՝ զարմացնելով, զայրացնելով, գուցէ նաեւ հիացնելով աշխարհին: Անասնագոմում ապրող անկիրթ թուրք ընտա-

¹² Նոյն, էջ 23-25:

¹³ Նոյն, էջ 25:

նիքի՝ Բայքալների զաւակները, հայ պատուարժան ընտանիքի՝ Տերգալուատեանների սեփականութիւնն անամօթաբար իւրացրածնելու շնորհիւ, կարողանում են լաւ կրթութիւն ստանալ ու հասնել հասարակական բարձր դիրքի, իսկ Մարիամին ու Գլակին անապատներով քարշ տուած ու խոշտանգած դահիճ Ռեջէփ Փերինչէքի թողը նաեւ հասնում է միջազգային ատեաններ, ինչպէս տեղեկանում ենք Ֆեթիիէ հանրմի խօսքից. «*Ռեջէփ Փերինչէքի ... թոռն այսօր Երոպայում է՝ դիւանագիտական աշխատանքի մեր դեսպանութիւններից մէկում, բնականաբար լեզուներ գիրի, պապից էլ ժառանգել է կապոյտ աչքերի հանդէպ թուլութիւնը*»¹⁴: Եւ սա եզակի օրինակ չէ թէ՛ վէպում, թէ՛ իրական կեանքում: Մինչդեռ Տերգալուատեանների ընտանիքի անդամները կա՛մ դաժանաբար ցեղասպանում են, կա՛մ դեգերում աշխարհով մէկ՝ չգտնելով մի ապահով հանգրուան եւ դառնալով հայի ընդհանրական ճակատագիրը մարմնաւորող անձինք, որոնք խարխափում են անորոշութեան, սպասումի, վաղուայ հանդէպ ունեցած տագնապների ճիրաններում՝ այդուհանդերձ չկորցնելով լաւատեսութիւնը. «*Կը յաջողուի՞ մեզ Արեւելքից Արեւմուտք, Հիւսիսից Հարաւ միաւորուել 'Վերադարձ Հայրենիք' գաղափարի շուրջը: Նոյնքան միաձոյլ, որքան միքանի հոգով կարող ենք գլուխ գլխի խմբուել 5րդ փողոցի փոքրիկ սրճարանում: ... Անկեղծ սասած չգիտենք: ... Գիշերուայ մթամած երկինքը դանդաղ իջնող փայլանաքար է թում մեզ, պատուհանի ճեղքից սառագող քամին՝ դամբանական: Բայց սիրտդ աղետում է գոնէ մի աչքով կտրուել երեկուայ օրից ու ապրել մինչեւ լուսաբաց...*»¹⁵:

Շեղինակը փարատում է բոլոր կասկածները, թէ մեր ազգի հետ պատահածը տարերային իրավիճակների, պատերազմական պարտադրանքների հետեւանք էր: Նա մանրամասն ներկայացնում է Օսմանեան Թուրքիայում հոչակուած բոլոր այն օրէնքները (իդէպ, այս երկրի պարագայում ոչ թէ օրէնք, այլ՝ Օրէնք. անպայման մեծատառով, ինչպէս հեգնում է վիպասանը), որոնց ապափնելով՝ իրագործում էին հայերի ծրագրուած հայրենագրկումն ու սպանդը: Եւ ի՛նչ հնչեղ էին այդ օրէնքների անունները՝ Տարագրութեան Օրէնք, Լքեալ Գոյքի Օրէնք, Համայնքապատկան Կալուածքների Օրէնք, Ունետրութեան Տուրքի Օրէնք, Թրքութեան Կուսակալութեան Օրէնք: Այս ամէնին դիմանա՛լ կը լինէր: Իսկ եթէ ոմանք էլ – ինչպէս ասենք Մարիամն ու Գլակը - դիմացել էին գաղթի բոլոր հնարաւոր սարսափներին ու ողջ մնացել, սա արդէն ուրիշ խնդիր էր առաջադրում հայութեան բնաջնջմանը հետամուտ թուրք ղեկավարութեանը: Պէտք էր արհեստականօրէն երկարացնել դէպի Հալէպ ձգող տանջալից ճանապարհը՝ այն ապահով յոյսով, որ բացառիկ պնդաճակատներն էլ կը մեռ-

¹⁴ Նոյն, էջ 498:

¹⁵ Նոյն, էջ 499-500:

նեն այս ոլորապտոյտի հետեանքով: Իսկ որպէսզի կեանքը ճանձրալի չլինի "գրօսանքի" ելածների համար, մոզոնում էին միօրինակ երթին բազմազանութիւն հաղորդելու տարատեսակ միջոցներ: Օրինակ՝ սովալլուկ մարդկանց մահուանն անհամբեր սպասող հերթական թուրք պաշտօնեան չոր հացի կտոր էր մեկնում սովատանջներին, ու երբ նրանք երկարում էին ձեռքերը, նա ծիծաղում էր ու գրպանը դնում հացը: Սա լուսանկարում վաւերացուած դրուագ է: Իսկ որքա՞ն են չվաւերացուածները: Եւ երբ, այնուամէնայնիւ, ստուար կարաւանի միքանի բզկտուած պատառիկ, ի հեճուկս Օսմանեան թուրքերի հաշուարկած օրինաչափութիւնների, դուրս էր պրծնում մահուան ճիրաններից, դիմակայում սովի ու սառնամանիքի փորձութիւններին՝ կուչ եկած Հալէպի որեւէ փողոցի որեւէ պատի տակ, սա էլ առանձին հոգս էր դառնում հայերի իսպառ բնաջնջմանը հետամուտ գազանների համար. վկաներ հարկաւոր չէին, բոլորը պիտի ոչնչանային: Իսկ աշխարհը անտարբեր ու լուռ էր այս աղաղակող փաստի հանդէպ, բացառութեամբ առանձին անհատների: Եւ անգամ այդ աշխարհի աչքը փակելու համար կայացած ձեւական դատաւարութիւնն ու դատաւճիռները շատ արագ փոխում են իրենց հունն ու սրբագործում ցեղասպանների՝ յանուն հայրենիքի մատուցած ծառայութիւնները:

Այս արհաւիրքը բեկում է հայութեան ճակատագիրը: Եւ հեղինակը փորձում է այդ բեկումից ցանուցիր եղած տարատեսակ բեկորները իմի բերել ու կազմել հայի ճակատագրի խճանկարը:

Ասացինք, որ *Ժամանակի Գեպրը* կայ միքանի սկիզբ:

Ահա մէկ այլ «սկիզբ» ընթերցողին կանգնեցնում է յետեղեռնեան իրականութեան առաջ: Յեղասպանութեանը, գաղթի սարսափներին յաջորդող կեանքը նոյնպէս լի է արհաւիրքներով: Բայց որքան գրողի նկարագրած ժամանակները մօտենում են մեզ, այնքան աւելի յստակ ու սահմակեցուցիչ է դառնում 1915ի թողած հետքը իւրաքանչիւր հայի կեանքում:

Ի՞նչ եղաւ հայերի հետ 1915ից յետոյ: Մարիամն ու Գլակ Տէրգալուստեանը, յաղթահարելով դեգերումների լայն շղթայ, հասան Ֆրանսիա, յետոյ Գլակը հայրենիք՝ Արեւմտեան Հայաստան վերադառնալու փափաքով տեղափոխուեց Խորհրդային Հայաստան (այստեղից հայրենիքը մօտ է): Հասկանալի է, որ նրան քեցին Սիբիր, յետոյ՝ կրկին Խորհրդային Հայաստան ու կրկին Ֆրանսիա՝ արդէն աքսորում ստեղծած ընտանիքի - կնոջ՝ Քնարի եւ որդու՝ Գնէլի հետ միասին: Մեծ գերդաստանից աշխարհի երեսին գոյատեւում է միակ արու ժառանգը՝ Գնէլ Տէրգալուստեանը, որ դատապարտուած է քննել-վերծանել, գրքի վերածել իր նախնեաց եւ ողջ հայ ազգի դաժան պատմութիւնը, իսկ սեփական ճակատագրի անդրադարձներում տազնապել միակ դստեր՝ Անիի ազգային ինքնութեանը գրեթէ անհաղորդ լինելու փաստից:

Մարիամը մանկահասակ տեգրոջն ու տալին՝ Յովսէփին ու Արուսեակին, 1915ին յանձնել էր իր պատուարժան սկեսրայրի՝ Գալուստ Տէրգալուստեանի "հաւատարիմ" բարեկամ թուրքին՝ Աբդուլլահ էֆենդիին (յետագայում վերանուանուած Աբդուլլահ Բայքայ): Աւելին, նրան ի պահ էր տուել խոշոր գումար, որի մի մասը պիտի օգտագործուէր երեխաներին խնամելու նպատակով, միւսը վերադարձուէր Մարիամին, երբ նա ապահով կը լինէր ու կը կարողանար իր մօտ տանել երեխաներին: Ահա այսպիսի միամտութիւն, որ կարելի է հասկանալ գաղթի բոթը բերող մունետիկի կանչով կեանքի շէմից ոտքը ներս դրած կնոջ պարագայում: Արուսեակը բռնութեամբ վերածուեալ է "բարերար" թուրքի հարսի, եւ օրինականացում է նրա հայրական տան ու հարստութեան սեփականումը իրենից տարիքով անտրամաբանօրէն մեծ ամուսնու՝ Թայիբ Բայքայի կողմից: Հոգ չէ, որ աղջնակը տասներեք տարեկանում մահանում է ծննդաբերելիս: Իսկ Յովսէփին յանձնում են որբանոց, որտեղ, ի տարբերութիւն այլ որբերի, ոչ թէ նրան խեղդում են Խարբերդից 30 կիլոմետր հեռու գտնուող լճում, այլ որպէս որդեգիր՝ յանձնում մի ծեր թուրքի: Այս որբուկը վերանուանում է, դառնում Եուսուֆ Ադրըօղլու, թլպատում եւ մնացած կեանքն ապրում է ինքն իր եսից օտարուած ու պարտադրուած եսին անհաղորդ: Նա այլեւս հայ չէ, այլ թուրքի զաւակ, բայց նրան ո՛չ հայերը, ո՛չ թուրքերը ընկալում են իբրեւ իւրային:

Վանում հերոսաբար կռուած հայերը՝ Մարիամի հայրական գերդաստանի անդամները, կա՛մ մեռնում են թուրքի ձեռքով, կա՛մ տեղափոխուած Խորհրդային Հայաստան ու զոհ գնում բոլշեփկեան սպանդին, կամ վերածուած Միսաք Տէրգալուստեանի (Մարիամի քրոջ որդին է), որի գոյութիւնը խորհրդային վախի պարտադրած շնային հաւատարմութեան վաւերագիր է՝ հարազատ զարմիկին՝ Գլակ Տէրգալուստեանին անվտանգութեան մարմինների ձեռքը յանձնելու չարձանագրուած, բայց շատ հաւաստի թուացող մատնութեան փաստով:

Միսաքի որդին՝ Գալուստը, հարկադրուած է պապերի կիսատ թողած կռիւը շարունակել թուրքի դէմ՝ արցախեան պատերազմում, իսկ նրա որդին՝ թրքագիտութեան բաժնի ուսանող Տարօնը, պիտի քչփորի նախնիների անցեալն ու ակնդէտ հետեւի թուրքի նորօրեայ յաղթերին, որի նպատակը սեփական ոճիրը հերքելն ու աշխարհի առաջ պարզերես դուրս գալն է: Այս յաղթերին խոչընդոտելու Տարօնի մարտադաշտը www.dialogue.eu.us համացանցային հարթակն է, որտեղից նա վարում է իր հետետողական, անզիջում կռիւը օր օրի աւելի լկտիացող թշնամու դէմ:

Հայի սերնդափոխութեան ընթացքը միայն ժամանակագրական փաստ չէ, Գրիգորեանը քայլ առ քայլ պատկերում է նաեւ սերունդների բովանդակային փոփոխութիւնը: Տեղասպանուող, ինքնութիւնից բռնի օտարուող, աշխարհի այս ու այն ծագերում դեգերող տեսակից հայը քայլ

առ քայլ վերածում է իր ցափն կառչած, բայց վրիժառու, պահանջատեր տեսակի: Այս իմաստով յատկանշական են ոչ միայն Գնէլ Տէրգալուստեանի եւ Տարօն Տէրգալուստեանի կերպարները: Անգամ Յովսէփ Տէրգալուստեանն է իր բաժին կոհիւր տալիս թուրքի հետ, թէեւ այս դէպքում նա հողմերի դէմ է սուր ճօճում իրականում:

Գրողը, իհարկէ, իր ասելիքի հիմքում դնում է ազգային հարցը, բայց նրա հայեացքն առաւել ընդգրկուն է: Նա խորհրդային իրականութեան համապարփակ նկարագիրն է տալիս՝ վէպի վերջին հատուածում ներկայացնելով Գրասիլդա Կազլաուսկիէնէի ընտանիքի պատմութիւնը. Ընտանիք, որի աքսորական կենսագրութիւնը խաչուել է հայ բախտակիցների՝ Գլակ Տէրգալուստեանի եւ Քնարի հետ: Սիբիրեան աքսորն ու ստալինեան հալածանքները միայն հայերին չէ, որ պատուհասել են խորհրդային անձայրաժիր երկրում: Լիտուացի այս ընտանիքի պատմութիւնն ընդհանրացնում, մեծացնում է ողբերգութեան բովանդակութիւնը:

Առհասարակ, Գրիգորեանը իր ոչ-ամբողջ ասելիքն է բառերի վերածում: Սա յատկապէս ակնյայտ է Ֆեթիիէ հանրմի պարագայում: Գրիգորեանն ասում ու չի ասում, թէ այս տիկինն իր մեծ հօրաքրոջ՝ Արուսեակի թոռն է (նշենք, որ Գլակը, Գնէլը, Վահագն Գրիգորեանը այս վէպում ժամանակ առ ժամանակ հանդէս են գալիս իբրեւ մէկ հաւաքական կերպար. սա հեղինակի իւրօրինակ գեղարուեստական հնարանքն է՝ ցոյց տալու համար, թէ իր նկարագրած դէպքերն ու անձինք միեւնոյն ճակատագրի կրողներն են): Եւ զարմանալի չէ, որ հենց Ֆեթիիէն է, այնուամէնայնի, փորձում հասկանալ Գնէլին ու ճիգ անում ինք էլ մի կերպ նրա կողմից հասկացուել: Պատճառաբանում է իրենց ժխտողական պահուածքը՝ վկայակոչելով Դինքի սպանութիւնը: Թուում է՝ չի ընկրկում Գնէլի ճակատային հարցադրումից. «Մի խօսքով ...խարբերդի (կամ ինչպէս է հիմա կոչում) մեր փունը չէք ուզում վերադարձնել»¹⁶: Բայց իրականում ցանուած է կասկածի, ինքնակեղեքումի սերմը, եւ Ֆեթիիէն փորձում է համաձայնութեան, փոխըմբռնումի եզրեր գտնել, առաւել եւս, որ պատահականօրէն (թէեւ գրքում ոչինչ պատահական չէ) զարգացող դէպքերի արանքում համակարգչի պաստառին յայտնուած Արուսեակի եւ Թայիբ Բայքալի լուսանկարը, Գնէլի ակնարկը. «Սա դու՛ք էք»¹⁷, հիմնովին խարխլում են Ֆեթիիէի՝ իր կենսագրութեան մասին մինչ այդ ունեցած պատկերացումները:

Սա նաեւ ընդհանրական ուղերձ է. քանի՛ հայ, քանի՛ Ֆեթիիէ հանրմի կարող է այսօրինակ դիպուածներով դարձի բերել կամ խորհելու առիթ տալ: Խօսուն վկայութիւնն ունենք տարիներ առաջ ՀՀ եկած ցեղասպան Ջեմալի թոռանը. ԵՊՀ ուսանողների հետ հանդիպման ժամանակ նրան

¹⁶ Նոյն, էջ 427:

¹⁷ Նոյն, էջ 434:

հենց այսպիսի հարցով էին շամփրել հայ երիտասարդները՝ յիշեցնելով, որ նա ապրում է հայից խլուած առանձնատանը:

... Տպարիչ պատկեր է, երբ կողոպտուած, բնաջնջուած Տերգալուստեան գերդաստանի շառափղ Գնէլը երկխօսում է թալանչու՝ Թայիբ Բայքալի ժառանգորդուհու՝ Ֆեթիհէ հանըմի հետ: Վերջինս Գնէլին իր ապահովութեան բարձունքներից կոչ է անում լայնախոհ լինել, մոռանալ անցեալն ու կառչել միակ միջոցից՝ բարեկամանալ թուրքի հետ. «Մի՛ մոռացէք. «Արդարութիւնը հեշտ է վիճարկել, ուժն ակներու է ու անվիճելի»:
Թուրքիան միայն ուժի լեզուն է հասկանում, իսկ հայերն այդ ուժը չունեն: Աւելին՝ իրենք այսօր զբաղուած են ուժի ցուցադրութեամբ, այդ ու ծախս պատնում են՝ Ամերիկային, Եվրոպային: Իսկ ձեզ սպառնալ էլ պէտք չէ, ուղղակի կը յօշոտենք: Այսօր չէ, վաղը: Միայն մենք չէ, Ադրբեջանը կայ: Աւելի արմատական հայապետաց: Դուք արքանի մէջ էք: Ամերիկան, Եվրոպան, Ռուսաստանը՝ մեզ այսպէս թէ այնպէս զսպողները, յաւերժական չեն, յարմար պահ մի օր անպայման կը գայ: Չգիտեմ, նոր ցեղասպանութիւն կը լինի, թէ չէ, բայց այսօրուայ փոքրիկ Հայաստանն էլ չի մնայ: Ձեզ կը փրկի միայն բարեկամութիւնը մեզ հետ, մըսոյ»¹⁸:

Այս "բարեկամական" յորդորին ի պատասխան՝ հնչում է Գնէլի դիտարկումը. «Ձեմ յիշում ում խօսքերն են, բայց շատ են հնչել. «Աւելի լաւ է կանգնած մեռնել, քան ծնկաչոք ապրել»: Անցել են այդ ժամանակները: Մերօրեայ աշխարհում մեռնում են ծնկաչոք ապրողները...»¹⁹:

Եւ գրողի վարպետ գրիչը համոզօրէն արձանագրում է իր հերոսների դիրքափոխութիւնը: Յովսէփ, Գնէլ, Տարօն եռեակից հաշիւ պահանջելու նկրտումներով Գնէլի հետ հանդիպում նշանակած թուրք տիկինը վերածուած է հաշուետուի, խճճուած իր պատկերացրած եւ այդ պատկերացումներից դուրս իրաւամբ գոյութիւն ունեցող իրականութեան բախումներում:

1915ը Վահագն Գրիգորեանի վէպում թուրքի հայասպան հաւատամքի մէկ արարն է ընդամենը: Նա ոչ միայն դրան նախորդած հայկական ջարդերին է անդրադառնում, այլեւ կուրացնող լոյսի տակ երեւակում դրան յաջորդած պատուհասները:

Յետեղեռնեան շրջանի բոլոր դրուագները վկայում են, որ թուրքը մնում է թուրք, որքան էլ փորձի աշխարհի աչքին քաղաքակիրթ ու ազնիւ երեւալ: Դրա վառ օրինակներից է Պոլիսի հայաթափութիւնը ներկայացնող հատուածը: Ունետրութեան տուրքի գոհերը (հիմնականում հայեր), արքստրում են Աշքալէ, եւ թուրքի ձեռագիրը նոյնն է. հլու-հնազանդներին ֆիզիկապէս գոյատեւելու հնարատրութիւնից, այնուամէնայնիս, չեն զրկում, իսկ իրենց քիմքին անհաճոյ հայերը սպանում են «Աշքալէում

¹⁸ Նոյն, էջ 429:

¹⁹ Նոյն, էջ 430:

"անյայտ չարագործների" ձեռքով»²⁰: Ճիշտ եւ ճիշտ ցեղասպան նախահայրերի ձեռագիր: Այսպէս, Աշքալէից ողջ է վերադառնում յարմարուող ու գգուշաւոր Աւետիք Քեչեանը: Իսկ Արամ Արարատը, որն ընդամէնը չի վախենում բարձրաձայն յայտարարել իր հայ լինելու, իր ինքնութեանը հաստատարիմ լինելու մասին, որ զայրացած բացականչում է. «*քանի՞ մահ է ձեզ պէտք, որ թուրքը ճանչնաք...*»²¹, բնականաբար, դառնում է նոյն այդ "անյայտ չարագործների" զոհը: Եւ որպէսզի պատրանք չստեղծուի, թէ 21րդ դարն ինչ-որ բան փոխել է այս համապատկերում, Գրիգորեանը վիպական պատումաշար է ներմուծում 2006ին Հրանտ Դինքի սպանութեան փաստը՝ Դինքին չներուեց թրքութիւնը վարկաբեկելու յանցանքը մեկնաբանութեամբ: Այո՛, Դինքը խախտել էր «Օրէնքը (301 յօդուած համեստ անունով)»²²: Իսկ այս սպանութիւններն ունէին նաեւ ածանցեալ շահեկանութիւն թուրքական պետութեան համար: Հայերը այս սպանութիւններից կարողանում են անել համապատասխան հետետութիւններ՝ երբեմն նոյնիսկ վերածուելով թուրքամէտութեան ակամայ քարոզիչների: Սա թուրքի սարսափով պայմանաւորուած վարք է, որի կրողների շարքում անգերագանցելի է Պոլսոյ պատրիարքը: Սրա նմաններին կարելի է գտնել հայոց աւելի վաղ անցեալի էջերում եւս: Սա, ցաւօք, հայ պատմութեանն անձանօթ տեսակ չէ, եւ իբրեւ ապացոյց՝ հեղինակը յիշեցնում է Պետրոս Գետադարձի մասին՝ վկայակոչելով 1045ին նրա հայրենադաւ, անձնապաշտ վարքը: Այո՛, այնպէս չէ, թէ գրողը համատարած ատելութեան քարոզ է կարդում միայն թուրքերի հանդէպ: Նա նոյնքան անհաշտ է հայի անկատարութիւնների հետ: Ոչ-պակաս, եթէ չասենք առաւել մեծ վորդովմունք կայ անկախ ՀՀում իրենց տէր հոշակած ուժերի՝ ՀԱՇ (Հայոց Ապագային Շարժում)ականների բնութագրումներում:

Եւ այս ամէնի հանրագումարը ձեակերպում է այսպէս. «*Վատ չէր լինի կեանքն անցնել շուրթերդ անէծքով չպղծած, բայց, վկայ է Աստուած, այդ հնարատրութիւնը մեզնից խլուած է*»²³:

Վէպի աւարտին հեղինակը պատմագրի, իրատեսի, երգիծաբանի գեղարուեստական ոճից անցում է կատարում դէպի երեակայականը: Իսկ նրա պարագայում երեակայութիւնը դաժան մղձաւանջ է ծնում: Ոչ միայն այս վէպում, այլեւ առհասարակ Գրիգորեանի գիրը հակուած է իրապատում շերտից թռիչք գործել դէպի երեակայականը: Եւ ոչ միշտ է այդ երեակայականը լուսաւոր երանգներ ունենում: Ի՞նչ է կանխագուշակում գրողն այս դէպքում: Նրա հերոսը՝ Գնէլ Տէրգալուստեանը (կամ հենց ին-

²⁰ Նոյն, էջ 468:

²¹ Նոյն, էջ 181:

²² Նոյն, էջ 389:

²³ Նոյն, էջ 393:

քը՝ Վահագն Գրիգորեանը) երագում յայտնուել է Երոպական Միութեան մայրաքաղաք Բրիսելում, 2113ին: Նպատակն է իմանալ, «... թէ ինչպէս է բարգաւաճել այն միութիւնը, որ առաւօրից երեկոյ խրապում էր մեզ, եւ որին մենք նախանձում էինք սեւ նախանձով»²⁴: Քաղաքն անճանաչելի է, մարդիկ, մեքենաներն ու վարորդները՝ արտասովոր ձեւի եւ ընթացքի մէջ: Իսկ Գնէլը պիտի հասնի ժամադրավայր, նրան սպասում է հանդիպում ծագումով ֆլամանդացի, բայց «բարեբախտաբար» արդէն երկրորդ սերնդի թրքացած պաշտօնեայի՝ ազգային փոքրամասնութիւնների գրասենեակի աշխատակցի հետ, որի գերխնդիրը Երամեջլիսի ընդունած օրէնքները փոքրամասնութիւնների շրջանում արմատացնելն ու բոլորին «թրքութեան գիրկը վերադարձնելն է»²⁵: Պաշտօնեան ձեռնայարկում գտել է Գնէլի գիրքը իր ժողովրդի ու տոհմի եղեռնազարկ ճակատագրի մասին եւ լպիրշօրէն քրքջում է այդ գառանցանքի վրայ: Ազգափոխուած (կամ՝ իր իսկական արմատները յայտնաբերած) թուրք պաշտօնեան, իբրեւ յաղթաթուղթ, Գնէլի առաջ շարում է աշխարհի վերափոխուած պատմութիւնն ու պատկերը: Ըստ այդ պատմութեան՝ «Ազգերն առաջացել են թրքութեան յենքի վրայ»²⁶: Սա Մեծ պատմաբանի (վայ-պատմաբանի՝ ըստ Գրիգորեանի) գիտականօրէն ապացուցուած եզրայանգումն է: «Մի խօսքով՝ *Homo sapiens*ը թուրքն է...»²⁷, - ամփոփում է Քեմալ վերանուանած ֆլամանդացի Ռընէն: Բոլոր լեզուները յայտարարուել են անկարեւոր, քանի որ աշխարհի թիւ մէկ լեզուն ԵՄի պետական լեզու հռչակուած թուրքերէնն է: Աշխարհի կարգախօսն է. «Թուրք եմ՝ ազնիւ եմ, խելացի, աշխատասէր»²⁸: Թուրքական օրէնսգրքի 301 յօդուածը տօնում է իր անվերապահ յաղթանակը ԵՄում, եւ Գնէլը՝ իր գրքով, կարող է ուղիղ կառափնարան քշուել (թերեւս, փրկութիւնն այն է, որ նա հողեղէն չէ, այլ ոգի՝ ոգեկանչութեամբ յայտնուած Բրիսելում):

Մեծ պատմաբանի անուան թանգարանում ներկայացուած են թուրքական մշակոյթի 9000ամեայ նմուշներ, բայց սա դեռ վերջը չէ. 45րդ համագումարում թուրք պատմաբանները խոստացել են, որ վաղեմութեան այդ ցուցիչը մինչեւ յաջորդ համագումար դառնալու է 10,000:

Եւ ուրեմն, միայն երկու հոգի են մնացել՝ Գնէլն ու նրա եղբորորդին՝ Տարօնը, որոնք յամառօրէն հետամուտ են իրենց յօրինած ճշմարտութեանը: Բայց թուրքը այս երկու անխոհեմների հետ կռիւ տալու մտադրութիւն էլ չունի. ամէլին քան հեգնանքը՝ նրանք չեն վաստակել: Քեմալ-Ռընէին

²⁴ Նոյն, էջ 480:

²⁵ Նոյն, էջ 488:

²⁶ Նոյն, էջ 489:

²⁷ Նոյն, էջ 490:

²⁸ Նոյն, էջ 488:

փոքր-ինչ մտահոգում է կետարեայ սառը պատերազմը իրենց ու «ԱՄՆ-Անգլիա-Իսրայել "Երեքի դաշինք" կոչուածի միջեւ»²⁹: Սրանք չեն ընդունում եւրոպական բարեփոխուած աշխարհը, որի մայրաքաղաք Բրիւսէլում, արձան է կանգնեցուած մեծ (վայ)-պատմաբանին, որտեղ բուրորը կողմնորոշուել են իրենց իսկական ծագման որոնումներում եւ հասկացել, որ ԵՄի մայրաքաղաքը պէտք է տեղափոխուել Ստամբուլ: Բայց եւ ի՞նչ մի մեծ խնդիր է այդ դաշինքը. իվերջոյ, բոլորին էլ ծնկի է բերելու իր արմատներին՝ թրքութեան գիրկը վերադարձած Եւրոպան:

Եւ այս ամէնից գրեթէ կարկամած Գնէլին հրաժեշտ տուող թուրքը բարեհոգաբար քրքջում է ու քրքիջից խեղդուելով եզրափակում իր դարակազմիկ խրատը. «Իսկ այսպիսի գիրք,- թփթփացնում է պայուսակին,- այլեւս մի՛ գրէք...- Արդէն հեռուից՝ եր նայելով,- մինչեւ փարեվերջ դեռ ժամանակ կայ, փոխէք, փրամագծօրէն փոխէք... քանի դեռ... - քրքիջ,- ողջ էք... վերադասատրէք փեսակէտերը, նոր գիրք գրէք... Ես էլ,- անելի հեռուից, ուսի վրայից, քրքիջով,- մի օր աղբը թափելիս՝ կը գզնեմ ձեղնայարկի փոշիների մէջ, եթէ, իհարկէ, մկներն այս անգամ, համից խելքը թոցրած, լրիւ կրծած չլինեն...»³⁰:

Այսուհանդերձ, այս (ինչպէս եւ վերը յիշատակուած՝ Գնէլ-Ֆեթիիէ հանրմ) երկխօսութիւնը վկայում է, որ հայի ու թուրքի երկխօսութիւնն այլեւս ցեղասպանողի ու ցեղասպանողի երկխօսութիւն չէ: Որ թէեւ այս երկու կողմերը ուժի տեսանկիւնից անհասար դիրքերում են գտնուում, միեւնոյն է սա ճակատամարտ է, ոչ թէ մատաղացու գառան կանխադատապարտուած զոհաբերութիւն, ինչպէս եղել է 1915ին ու դրանից առաջ:

Իրականութեան ներշնչած յոռետեսական մղձաւանջը ճաք է տալիս նոյն այդ իրականութեան անկասելի ընթացքի թափից: Ժամանակի գետը սերունդների մէջ ինչ-որ տեղաշարժ է հրահրում: Կեանքի մայրամուտին վերածնուած Յովսէփ Տէրգալուստեանը իր կիսատ մնացած կրիւն է տալիս խլացած Թայիբ Բայքալի հետ (ո՛վ կը սպասէր, չէ՞ որ նա վաղուց քայլող հանգուցեալ էր): Բայքալի խլութիւնը սոսկ ֆիզիկական արատի վկայակոչում չէ գրողի կողմից, այլ խորհրդանիշ. թուրքի յատկապէս այդ սերունդը խուլ է հայի ցաւի, նզովքի, ցասման, պահանջատիրութեան հանդէպ: Բայց յաջորդ «ճակատամարտը»՝ Գնէլ Տէրգալուստեան-Ֆեթիիէ, խառնում է բոլոր հաշիւները. յոյս կայ, այնուամէնայնիւ:

Եւ ամենամեծ մխիթարութիւնը. վէպի վերջում թուրքի, ռուսի, այլեայլ պարտադրանքների բերումով մտախեղուած հայի տեսակների համախմբում է կատարում: Միսաքը խոստովանում է, որ «այո» է ասել խորհրդային Միութիւնից անկախանալու հանրաքուէին՝ ինքն էլ զարմացած իր այդ

²⁹ Նոյն, էջ 489:

³⁰ Նոյն, էջ 494:

աստիճան յեղաբեկումի փաստից: Գնելը անչար է մանուկ օրերին իր հետ ոչ միշտ հաշտ զարմիկի՝ Գալուստի հետ, որն իր կերպարը սրբագործել է արցախեան հերոսամարտում: Նրա որդին՝ Տարօնը, հորեղբոր հոգեւոր դաշնակիցն է թուրքի դատաստանին հետամուտ լինելու գործում: Իսկ Գնելի դուստրը՝ Անին, որ կարծես ֆրանսիական իրականութեան մէջ չպիտի կողմնորոշուէր իր ինքնութեան խարխափուն որոնումներում, ՀՀ առաջին իսկ այցի արդիւնքում շառագունելով բնութագրում է հայաստանցի տղաներին. «Հոս անանկ կը նային, որ ծունկերդ կը թուլան»³¹:

Գրողի տեսլականն այսքանով չի սահմանափակում: Նա հակուած է հաշտեցումի, սիրոյ, միութեան անելի լայն սահմաններ գծել մարդկութեան կեանքում: Այս իմաստով բնութագրական է Գնելի եւ Աստայի սիրոյ թեման, որը եւս մէկ փաստարկ է, թէ տառապալից կեանք ապրած մարդկանց ժառանգները յաղթահարում են նախնիների հոգեբանական բեռն ու տրտում կեանքի բնականոն ընթացքին: Եւ ոչ-պատահական է, որ Գնելի ծնողներին սիբիրեան աքսորում սատարած Աստայի տատիկը կեանքի վերջում էլ խնամում է հայկական գամփռ Ռուդոլֆին, որը, չնայած բազմաթիւ վայրիվերումներին, իվերջոյ տուն է վերադառնում՝ Հայաստան:

Եւ եւս մի կարեւոր հանգամանք, որ ընթերցողին մխիթարուելու հիմք է տալիս: Իր յոռետեսական երագ-մղձաւանջին Վահագն Գրիգորեանը հակադրում է իրեղէն-լաւատեսական ուղերձը, որը մեզ դուրս է բերում պատճառաբանուած ու հասկանալի յուսալքութեան ճիրաններից, բայց եւ ապսպրում չկորցնել յամառ հետետողականութիւնը, որը միակ ճանապարհն է այդ լաւատեսութեան յաղթանակի. «... մի բան մենք հաստատ գիտենք՝ չկան չիրականացող ցանկութիւններ, եթէ հաւատ են դառնում: Մենք երկար, շար երկար ենք ապրել ադամամութի մէջ, դադարել հաւատալ, որ լոյս երբեւէ կը բացուի, առաւել եւս, որ մոլթը ցրելու փորձերը սոսկ անելի են խտրացրել խաարը, բայց եթէ նպատակդ լոյսն է եւ ոչ թէ խաարին յարմարուելը, իվերջոյ կը տեսնես լուսաբացը»³²:

Կրկին դիմենք Յովհաննիսեանի վերլուծութեանը, որում մասնաւորապէս կարդում ենք.

Գիրքը գրուել է բաց նեարդերով եւ արնածոր սրտով... Սա երեսում է իւրաքանչիւր տողից... Սակայն յիշենք ճակատամարտ կամ մեծ աղէտ պատկերող հին նկարիչների ցնցող տեսարանները կամ «Հանգստացող Արէսին», ինչքան մեծ պէտք է լինի արուեստագէտը, որ նոյնիսկ որսի վրայ յարձակուած, այն յօշոտող ոհմակին նայելիս մեր մէջ արթնանայ միայն մարդուն վեհացնող, մեզ գազանից վեր դասող ներքնատեսութիւնը... Ահա հենց դա էլ արուեստն է... Երբ ոչ թէ արցունք է քանում ողբերգութեան, անգամ եղեռնագործութեան ահագնութիւնից, այլ գործի է դնում մեր մէջ նիրհող կամ յատուկ քնեցրած

³¹ Նոյն, էջ 496:

³² Նոյն, էջ 499:

հարցադրումների մեքենան: Վահագն Գրիգորեանի՝ Մեծ Եղեռնի եւ դրան յաջորդած համազգային նորագոյացութիւնների մասին հարցադրումները բազմաթիւ են, բայց ամէնեւին էլ պատասխանների չեն սպասում, այլ սա մի տարօրինակ մեխանիզմ է, որ ինքն ունակ է պատասխանելու իր առաջադրած հարցերին, եւ մեկնակէտը հենց ծնուած օրից մեր մէջ բոյն դրած, ներսից կրծող անտրամաբանութիւնների շղթայի «օրինականութեան» դատաստանը տեսնելն է... Վահագն Գրիգորեանն իր սարկազմով ոչնչացնում է այն, ինչին մենք երբեմն դեռ փորձում ենք մեղմացուցիչ հանգամանքներ գտնել...³³:

Վահագն Գրիգորեանն պատումը շարադրում է՝ ոչ միայն աճպարարի հմտութեամբ խաղալով բառերի հետ, այլեւ՝ վիպական ընթացքի մէջ խաչածետող բազմաթիւ հանգուցաթէլերի ու թեմաների: Եւ այս ամէնից շահում է վէպի գեղարուեստական որակը. անգամ ամենամոայլ իրողութիւնը ներկայացնելիս գրողը չի զլանում ոճական շոայլ նրբերանգներ ներմուծել իր շարադրանք եւ ստիպել ընթերցողին կարդացածի բուն բովանդակութիւնից մի պահ վերացարկուել ու տրուել գրողական վարպետութեան հմայքին: Օրինակ՝ գաղթի սարսափելի երթից փրկուած եւ Մարսէյ հասած Մարիամին ու Գլակին դիմաւորում է Միջերկրականից փչող "քաղաքավարի" քամին, Գլակի որդուն՝ Գնէլ Տէրգալուստեանին, դասընկերները Ֆրանսիայում ծաղղում են "խաթար" լեզուի պատճառով, Գնէլ Գալուան (Գնէլի գրական կեղծանունն է) հրատարակիչների պատուէրով ստիպուած է տարին մէկ գիրք գրել «զգուած» գրչով, Մերձբալթիկա մեկնած Գալուստ Տէրգալուստեանի եւ Կարինէի պահուածքը բնորոշում է իբրեւ «վայրենի տնավարութիւն», Աստայի հանդէպ Գնէլի զգացմունքները որոշակիանում են մէկ արտայայտութեամբ՝ «Աստայի տաք ձայնը»: 1992ին Ֆրանսիայից Հայաստան եկած Գնէլի զգացումները բնութագրում են այս կերպ. «Յաճախ չինական գիր էին հայեացքները, ինչպիսին էլ լինէին՝ սեւեռուն, անտարբեր, ակնդէպ, խուսափող»³⁴: Պատկերաւորութեամբ առանձնանում է եղբօրորդու՝ Գնէլի յայտնուելուց յետոյ Յովսէփ Տէրգալուստեանի՝ կեանք վերադառնալու եւ Թայիբ Բայքալից պատասխան պահանջելու վճիռը կայացնելու նկարագրութիւնը. «Եռուսէ Ադրըօղլու կոչուող տապանաքարը, կարծում ենք, այսպէղ սկսեց ընկնել Յովսէփ Տէրգալուստեանի վրայից: Յամէնայնդէպս այնքան շարժուեց, որ նրա տակ պառկածը կարող էր մտածել այն շուռ տալու մասին»³⁵:

Ատերեւոյթ մանրուք թուացող մի խօսքի, մի պատկերի միջոցով Գրիգորեանը կարողանում է բնութագրել իր հերոսների մարդ տեսակը: Այսպէս, դէպի Հալէպ ձգուող մահուան կարաւանից մազապուրծ Մարիամի

³³ Յովհաննիսեան:

³⁴ Նոյն, էջ 265:

³⁵ Նոյն, էջ 439:

կամ ճակատագրի դաժան զիգզագներից դուրս պրծած ու Խորհրդային Հայաստան հասած Գլակի համար երանության չափանիշ էր ընդամենը մարմինը կեղտից մաքրելը (մի դեպքում՝ ցեխաջրում, միս դեպքում՝ գիւղի խանութից գնուած կլոր տաշտում): Մարիամի շուրթերից անելի կոպիտ արտայայտութիւն դուրս չի գալիս թուրք ցեղասպաններին բնութագրելիս, քան հակիրճ, զուսպ, խուսափողական այս արտայայտութիւնը. «*հա՛, գէշ մարդ էր, գէշ բաներ ըրաւ*»³⁶: Նոյն հակիրճութեամբ գրողն ընթերցողին է մատուցում Գալուստ Տէրգալստեանի կնոջ՝ Կարինէի քաղքենիութեան, Աստայի բարեկրթութեան, անշահախնդրութեան, Աստայի զարմիկի՝ Սառվիսի անպատկառութեան, ընչաքաղցութեան, Միսաքի մորթապաշտութեան հասնող զգուշաւորութեան, Գլակի չնահանջող, խենթ յամառութեան եւ այլ հերոսների տիպական բնութագրութիւնները: Մէկ-երկու դիպուկ բառով, պատկերաւոր արտայայտութեամբ հեղինակը կարողանում է բացել մի ամբողջ կերպար, ներկայացնել մի ընդգրկուն իրականութիւն:

Գրիգորեանն իր վիպական ընթացքին ասես գործնականօրէն մասնակից է դարձնում ընթերցողին, մի իրատեսակ յետադարձ կապ հաստատում իր, իր պատմութեան հերոսների եւ ընթերցողի միջեւ:

Այսպէս, պատմելով գաղթի ճանապարհին Մարիամի պահուածքի մասին՝ Գրիգորեանն ասում է, թէ բոլորը խելագար էին համարում նրան: Եւ զարմանալի ենթաշերտով հասկանում ես, որ այդ բոլորի մէջ չկաս ո՛չ դու՛ ընթերցողդ, ո՛չ հեղինակը: Հեղինակն ասես կիսում է իր գաղտնիքն ընթերցողի հետ, միայն ընթերցողին է վստահում այն: Տարօրինակ կապուածութիւն է առաջանում վէպի հերոսների եւ ընթերցողի միջեւ. երբ ընդհատում ես ընթերցումը, մի տեսակ մեղքի զգացում ես ունենում, թէ միայնակ ես թողել հարազատ մէկին (ասենք՝ Մարիամին՝ գաղթի ոլորաններում, Գլակին՝ սիբիրեան սառնամանիքների մէջ, Յովսէփին՝ իր օտարրոտի անտան պարտադրանքներում եւ այսպէս շարունակ): Կարծես քեզ պատասխանատու ես զգում գրական հերոսների առաջ, շտապում ես կրկին բացել գիրքն ու շարունակել համակեցութիւնդ՝ նրանց հետ:

Ես մի անբացատրելի ոստայն է հիւսում Գրիգորեանն իր վէպում, որին չտրուել անհնար է: Վիպական ողջ պատումաշարի կտրուածքով ձգում է անորսալի մի շղթայ, որը մեզ ենթագիտակցօրէն ազուցում է այն հերոսների ու դրուագների հետ, որոնք վէպի սկզբում հպանցիկ նետում են ասպարէզ, ապա երկար ժամանակ անհետանում, բայց ի վերջոյ դառնում շեշտակի ներկայութիւն: Նկատի ունենք, օրինակ, Մարիամին գաղթի ճանապարհին վերահսկող թուրք ոստիկանին՝ Ռեջէփ չաուշին (1934ից՝ Ռեջէփ Փերինչէք), Եուսուֆ Ադրըօղլուին, Արամ Արարատին, մանկահասակ Արուսեակին, Թայիբ Բայքալին: Որքան էլ այս կերպարները, նրանց առն-

³⁶ Նոյն, էջ 120:

չուող հանգամանքները առաջին հայեացքից թեթեւ ուրուագծերով են մատուցում, միեւնոյն է, Գրիգորեանը անբացատրելի մի հնարով կարողանում է յետադարձ կապի կանխազգացումով համակել ընթերցողին, յուշել, որ այս կերպարների հետ հաղորդակցութիւնը դեռ աւարտուած չէ: Եւ իսկապէս, պարագաների որոշակի դասատրութեամբ դրանք յետոյ դառնում են վիպական գործողութիւնների եւ հեղինակային գաղափարաբանութեան կարեւորագոյն առանցք:

Յիրաւի, *Ժամանակի Գեպը* Գրիգորեանի՝ յարափոփոխ ժամանակին սեւեռուած ակնդէտ հայեացք է, որ թէւ ծայր է առնում զանազան դիտակէտերից ու բեկում զանազան թիրախների բախուելուց, եւ չի կորցնում իր մշտակայուն առանցքը եւ յամառօրէն ձգտում դէպի լոյսը՝ շարունակելով շերտ առ շերտ բացել իր նախանշած ոչ-փխրուն, կարծր ակոսը:

ԱՂՍՏ ՀԱՅԸ

Ազգայ Հայը վէպը գրուել է 2008-9ին, տպագրուել է 2009ին: Այստեղ, ինչպէս եւ *Առաջնորդի կեանքն ու մահը* վէպում, վիպական պատումաշարը կառուցում է մէկ հերոսի՝ Հայկազուն Ազատեանի ճակատագրի շուրջ: Իհարկէ, լինելով մէկ հերոսի կեանքի պատմութիւն, այն ընդհանրացումի լայն շրջանակ է ի յայտ բերում, որում երեակում է հայրենիքը քաճ եւ Եւրոպայում կամ այլուր իրենց բախտի թռչունը որոնող անհաշի հայերի ճանապարհային քարտէզը:

Համալսարանի աշխարհագրութեան ֆակուլտէտի ուսանող Հայկազունին վիճակուած է հայկական բանակ զօրակոչուելու եւ ամէն ընդմիջ վերսկսուել սպառնացող հայ-ադրբեջանական պատերազմի զոհը դառնալու հեռանկարը: Միակ որդուն այս արհաւիրքից փրկելու ծրագիրը յղանում է մայր Ազատեանը: Ի հեճուկս ամուսնու եւ հնազանդօրէն իր մեքենայութիւններին յանձնուած որդու՝ Թամար Ազատեանը գործի է դնում բազում հնարքներ, հրաշքով որդուն դուրս հանում Հայաստանի սահմաններից ու մեծ յոյսերով ճանապարհում Եւրոպա՝ Եւրօլանդ, ինչպէս բնութագրում է որոշակի տեղ ու անուն չենթադրող երկիրը՝ վէպի հեղինակը:

Այստեղ նա յանձնուած է հեռատր ազգականի՝ քեռի Յարութիկի հոգածութեանը, որի միակ մարտավարութիւնն իր գլխին փաթաթուած ազգականից հնարատրինս արագ եւ առանց բարդութիւնների ազատուելն է:

Հայկազուն Ազատեանը (անուն-ազգանունն արդէն իսկ յուշում են, որ խօսքը ոչ թէ մէկ հայ երիտասարդի ու նրա ճակատագրի մասին է, այլ մի ամբողջ ազգի ու նրա երիտասարդ սերնդի) անցնում է Եւրօլանդեան բոլոր «հմայքների» միջով՝ քաղց, անապաստանութիւն, քմահաճ ու բռի տանտիրոհու պարտադրանքներ, շուկայում «էստի համեցէք» կանչող նորօրեայ Գիքորի կարգավիճակ, հայրենակիցների ծեծուջարդ, հիանդանոցում պէտքանօթների սպասարկում, կայարանում ու ոստիկանական բա-

Ժանմունքում գիշերելու հարկադրանք, չգիտակցում սիրային արկածախնդրություն: Եւ բոլոր այս վիճակներում կայ նաեւ մի այլ բարդութիւն գորակոչից խուսափած ու կեանքի ոչ-պակաս անողոք պատերազմի ներքաշում հայ երիտասարդի համար. նա Երեւանում մնացած իր մօրն ու սիրած աղջկան՝ Անոյին, չպիտի յուսահատեցնի. ինչ էլ պատահի, նրանք պիտի մտածեն, որ իզուր չէ Հայկազունը հասել Եւրօլանդ՝ նիւթական եւ բարոյական մեծ զոհողութիւնների գնով: Նրանց համար հեռախօսագծից այս կողմ եղած իրականութիւնն այլ գոյներով է հարկաւոր ներկայացնել. ամէն ինչ կարգին է, ինքն իսկական դրախտում է, ոչինչ իզուր չի արուած, ինքը միանգամայն ապահով է եւ երջանիկ եւրօլանդեան օրրանում:

Եւ երբ միայն մէկ անգամ նա թուլութիւն է ունենում խոստովանելու մօրը, թէ ինքն անտուն ու քաղցած նստած է երկաթուղային կայարանի սպասասրահում եւ խնդրում է իրեն փող ուղարկել՝ Հայաստան վերադառնալու համար, երբ արդէն համակերպուած մտածում է Հայաստանում գորակոչից խուսափելու պատճառով դատապարտուելու, բանտ նստելու, այնուամէնայնի՛ր՝ բանակում ծառայելու հեռանկարի մասին, նրա գլխավերելում իսկապէս ճախրում է բախտի թռչունը: Քեռի Յարութիկի թեթեւ ձեռքով նա մուտք է գործում վերջինիս քենու՝ սրճարանատէր Ուիլմայի աշխարհ, որտեղ այլեւ տեղ չունեն քաղցը, անապաստանութիւնը, Հայաստան վերադառնալու սպառնալիքը եւ մնացած բոլոր անյարմարութիւնները, որ մինչ այդ սեղմում էին Հայկազունի կոկորդը: Ձեռներէց, նրբաճաշակ հայի շնորհիւ անշուք, փնթի ծակուռ յիշեցնող «Հին Բակ» սրճարանը վերածում է քաղաքի լաւագոյն, նախանձ շարժող ժամանցի վայրերից մէկի: Կեանքը բազում հաճելի անակնկալներ է մատուցում Հայկազունին եւ նրա տնօրինութեանը յանձնուած սրճարանին: Անակնկալների անկասելի ընթացքը ապահովագրում է կարեւոր «գործարքով»՝ Հայկազունն ամուսնանում է Ուիլմայի միակ դստեր՝ Էլժբէթի հետ եւ դառնում ընտանեկան բիզնէսի միանձնեայ տիրակալը: Օր օրի աճող հեղինակութիւնը նաեւ նախանձի սերմեր է ցանում ձեռներէց հայի շուրջ. թէ՛ հայրենակիցները, թէ՛ եւրօլանդցիները քիչ փորձեր չեն անում պղտորելու շնորհալի հայի կեանքը, սակայն նա արդէն սանձել է իր բախտի նժոյգը, եւ ոչինչ այլեւ չի կարող նրան վար բերել թամբից: Տեղացի ազդեցիկ դէմքեր են շրջապատում նրան, նա անձեռնմխելի է այլեւ, իր սիրուի ու՛ յայտնի հեռուստատեսային աստղ Իզոլդայի անձնուրաց ջանքով անգամ դառնում է Եւրօլանդի քաղաքացի եւ հրաժարում Հայաստանի քաղաքացիութիւնից (այլ կերպ ինչպէ՛ս վերջնականօրէն ազատուել Հայաստան վերադարձուելու, դատուելու եւ հայոց բանակում ծառայելու դժբախտութիւնից): Ասել է թէ՛ Հայկազունն աներեր քայլում է դէպի վերելք տանող ճանապարհով: «Սարն ի վեր գնալու համար, վերջի վերջոյ, հեշտ բան չի, լուրջ խթան է պէտք: Օրինակ, եթէ քեզ թում է, որ կեանքիդ բնական ընթացքը

խաթարած սխալ ես գործել: Քունքիդ գնդակ արծակելը, պարկերաւոր ասած, իհարկէ, կայ ու կայ, բայց սխալից շահ կորզելը նոյնպէս ելք է, եւ, թերեւս, անելի շահաւէր: Այս փառաւոր միտքը... մեզ յուշում է Հայկազուն Ազատեանը՝ իր ամէնօրեայ անձնուրաց՝ սարն ի վեր աշխատանքով»³⁷:

Կեանքի այս արտաքին փայլին զուգահեռ վիպասանը քայլ առ քայլ հասունացնում է ինքնօտարումի այն դաժան յետագիծը, որը վիճակուած է իր հերոսին: «*Հենց ոգետրութեան առաջին ալիքը անցնում է, հենց յաջողութիւնը սկսում է խաղաղ հոսել բացուած ջրանցքով, ճակատագրական սխալի աղօտացած, բայց չջնջնուած մոռթը նորից յարակում է*»³⁸, - գրում է Վահագն Գրիգորեանը:

Իսկ ճակատագրական սխալները աղաղակող են Հայկազունի կեանքում: Հայաստանը լքելու նրա քայլը խիստ դատապարտումի է արժանացել հայր Ազատեանի կողմից: Վերջինս ոչ միայն հրաժեշտ չի տալիս որդուն մեկնումից առաջ, այլեւ երբեք նրա հետ չի շփում մինչեւ մահը: Սիրած աղջիկը, ի հեճուկս իրեն լքած Հայկազունի, անյաջող ամուսնութիւն է ունենում, մայրանում, բաժանում ու դառնում Գետնի (ոչ-պակաս՝ անյաջող ընտրութիւն) սիրուիին: Մայրը կաթուածահար վիճակում մնում է միայնակ, մահանում՝ սրտացաւ, կարեկից հոգու կարօտ: Իսկ որ նա սրտացաւութեան, ջերմութեան անդառնալի կորստի փաստին է բախուել, պարզ է դառնում մահուանից շատ անելի առաջ: Նրա հանդիպումը որդու հետ, վերջինիս՝ Եփրանդում հաստատուելուց եւ բարեկեցութեան նախանձելի շէմը թեակոխելուց յետոյ, տխուր պատկեր է ներկայացնում: Մայր եւ որդի օտարացել են այնքան, որ երկուստեք գիտակցում են միմեանցից հեռու լինելու յստակ առաւելութիւնը. «...օտար ու անսովոր վայրերը, օտար ու անհասկանալի մարդիկ, այսպէս թէ այնպէս հանդուրժելի են, ինչպէս ամէն մի օտար բանը. քոնը չի ու վերջ, հերն էլ անիծած: Անտանելի է հարազատի օտարութիւնը, որովհետեւ քոնն է, բայց քոնը չի»³⁹: Ահա խորհրդածումների այս շղթան է մէջտեղ բերում Գրիգորեանը Հայկազունի եւ մայր Ազատեանի՝ չորս տարուայ բաժանումից յետոյ կայացած հանդիպման առնչութեամբ:

Եւ արդեօք միայն հարազատներն ու ընկերներն են օտարացումի այս անբնական տիրոյթում, արդեօ՞ք սա վերջն է, արդեօ՞ք ծնողների մահից յետոյ այլեւ ոչինչ չնշանակող երեւանեան հարազատ տան առքովաճառքով փակում է Հայկազունի հայաստանեան կեանքի շղթան: Դե՞ ոչ: Հայր՝ Հայկազունը, դե՞ մի «բարձր» թռիչք էլ պիտի գործի՝ ապացուցելու հա-

³⁷ Վ. Գրիգորեան, *Ոստանի վերջին ճամփորդութիւնը*, Նայիրի հրատ., Երեւան, 2009, էջ 245 (վէպի յետագայ քաղուածքները՝ այստեղից):

³⁸ Նոյն, էջ 249:

³⁹ Նոյն, էջ 244:

մար, որ ինքը երդուեալ եւրօլանդցի է, եւ իրեն ոչինչ ետ չի պահի «սարն իվեր» իր խոյանքում: Նա այլեւս հանրային դէմք է, յաջողակ *բիզնէսմէն*, նրանով միայն ընտանիքն ու ծանօթները չէ, որ հետաքրքրուում են: Եւ ահա յայտնուում են հայ համայնքի նախագահ, Եւրօլանդում ՀՀ դեսպան, լրագրողներ, էլի մի շարք դէմքեր ու դէպքեր: Հայկազունը ներքաշուում է մի յորձանքի մէջ, որն այլեւս անկառավարելի է: Եւ մի օր էլ նա իրենից հարցազրոյց վերցնող լրագրողի թեթեւ ձեռքով հրապարակայնօրէն ցեխ է շարտում իր հայրենիքի, նրա կառավարութեան, հայ-աղբբեջանական թնջուկի եւ այսօրինակ այլ հարցերի ուղղութեամբ, անձնական ապահովութեան նպատակով խորտակում դէպի հայրենիք տանող բոլոր կամուրջները՝ վարկաբեկութիւնով ինքն իր ու հայրենակիցների աչքում եւ պայծառ լոյսերի մէջ շողշողալով եւրօլանդցիների առաջ:

Թէեւ Վահագն Գրիգորեանի հերոսը Եւրօլանդում է, եւ վիպական գործողութիւնների տեղանքը չորոշակիացող եւրոպական քաղաք, այդուհանդերձ ընթերցողը լիարժէքօրէն մասնակից է դառնում Հայաստանում կատարուող իրադարձութիւններին: Մեզ ծանօթ 2008ի մարտիմէկեան ներքաղաքական անցքերը վաւերագրողի անկողմնակալութեամբ եւ դաժանութեամբ ներկայացնում է Գրիգորեանը Երեւանի հետ հեռախօսային խօսակցութիւնների եւ հեռուստաթերից ու համացանցից սփռուող տեղեկատուութեան միջոցով: Սա կարետոր շերտ է բացում *Ազատ հայր* վէպի բովանդակութեան մէջ: Մենք հասկանում ենք գրողի նպատակը. շեշտել, յուշել, թմբկահարել աղաղակող փաստը՝ որտեղ էլ լինես, ինչ ճակատագրով էլ ապրես, հազար թէլով կապուած ես քո հողի ու նրա իրականութեան հետ, երբեք չես կարող խուսափել այն ամէնից, ինչ կատարում է քո հայրենիքում: Եւ որպէսզի է՛լ անելի համոզուենք այս ճշմարտութեան մէջ, իր վէպի վերջին մէկ-երկու էջում Գրիգորեանը, իվերջոյ, արտածում է «ազատ հայի»՝ դեռ վերնագրից մեզ հետապնդող բանաձեւը:

Հայկազունը նստած է համակարգչի առաջ ու հետեւում համացանցային լրահոսին. «... յաջորդ կայքը մտնելով, հանդիպում է ազատ հայերի կոչին՝ ուղղուած ազատ հայերին... Ուրեմն, «Քաղաքացիական անհնազանդութեան կոչ»՝ «Ուղղուած բոլոր ազատ Հայերին»: «Հայերը», այո, մեծապատ է: Կարգախօսներ էլ կան, օրինակ, «Կեցցէ Հայի խաղաղ ու ազատ ոգին»: Նորից «Հայր» մեծապատ: Մնապարծութիւն չի, մեծապատով «հայր» կարեւորում է, դառնում «Հայ»⁴⁰:

Ազատ հայերը կոչ են անում աշխարհի բոլոր ազատ հայերին դադարել վճարել հարկերը, ջատկացնել որեւէ նոփրատութիւն այն կազմակերպութիւններին, որոնք այդ գումարներն ուղղում են ՀՀ կառավարութեանը: Փոխարէնն առաջարկում է բոլոր միջոցներն ուղղել Հայաստանի գիւ-

⁴⁰ Նոյն, էջ 366:

ղերում եւ քաղաքներում ապրող հայերին: Համաձայն ենք Հայկազունի հետ՝ բաական անորոշ հասցէ, նոյնքան անորոշ հասցէատէրեր: Եւ հրապարակում է մերժաւածների «սեւ ցուցակը». «"Դրամ եւ օժանդակութիւն չպէտք է փրփի «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին, Ամերիկայի Հայկական Համագումարին, Հայկական Ազգային Կոմիտէին, Հայ Օգնութեան Միութեանը, ձեզ ծանօթ քաղաքական կուսակցութիւններին եւ միւս բոլոր կազմակերպութիւններին, որոնք ուղղակիօրէն սատարում են Հայաստանի Հանրապետութեան բռնապիտակական եւ յանցագործ իշխանութիւններին»⁴¹:

Եւ ի՞նչ է սա նշանակում վերջին հաշուով: «Կեցցէ՛ք, մրտածում է Հայկազունը, քանդում ենք Սփիւռքը, հեփն էլ Հայաստանը, յեփո՛յ: Աչքի լոյս չեն Հայաստանի իշխանութիւնները, Սփիւռքի կազմակերպութիւններն էլ երեւի իրենց թերութիւններն ունեն, բայց տեղը ի՞նչ էք շինում՝ Հայաստանի ու Սփիւռքի, չէ՞ որ այստեղ էլ, այնտեղ էլ որեւէ կառոյց չմնաց: Բացի, հասկանալի է, ազատ հայերից»⁴²:

Իսկ տեղը, ըստ «Ազատ հայերի», դատարկ չէ: Նրանց կոչն ունի կառուցողական առաջարկութիւն, որն ընդամէնը Հայկազունի հեզնանքն է շարժում եւ մղում ինքնազննումի. ««Մենք կոչ ենք անում բոլոր հայերին միատրուել քաղաքացիական հասարակութեան ստեղծման գործում, որի բարձրագոյն գիտակցութիւնը վճիռ կը կայացնի եւ կը ստեղծի իր սեփական ապրելակերպը, արդար հասարակութիւն եւ արդար երկիր»: Հայկազունը գիտի, որ ինքը լաւ հայ չի, բայց, որ իրենից անարժանն էլ կայ, չգիտէր: Ինչու՞ դաժան, ուժի օրէնքով շարժուող աշխարհում, որտեղ ամէն ինչ ուժն ու փողն են որոշում (Եւրօլանդում է համոզուել), հենց հայը պիտի լինի սրբացած մեռնողը (աստ հանգչի հայ ազգը, որը առաջինը աշխարհում միատրուեց քաղաքացիական հասարակութեան ստեղծման գործում, որի բարձրագոյն գիտակցութիւնը վճիռ կայացրեց եւ ստեղծեց իր սեփական ապրելակերպը, ազատ հասարակութիւն եւ ազատ երկիր): Միամի՛տ էք, թէ՛ խորամանկ: «Բարձրագոյն գիտակցութիւն», «սեփական ապրելակերպ» «արդար հասարակութիւն»... «Արեւի քաղաքը» եղաւ: Հաշիշ, բայց ինչու՞ հենց խեղճ հայերի համար: Դուք, աւելի լաւ է, ինձ ուրիշ բան ասէք. ես՝ Հայաստանին այսքան վատութիւն արածս, արդէն կարո՞ղ եմ ազատ հայ համարուել»⁴³:

Ինքն իրեն տրուած Հայկազունի հարցին պատասխանում է հեղինակը. «Մեզ թաւում է՝ չէ, այլապէս այս սրտառու կոչին այսքան անշնորհք չէր արձագանգի: Քմահաճ է ազատութիւնը՝ զոհողութիւն է պահանջում բայց

⁴¹ Նոյն, էջ 368:

⁴² Նոյն, էջ 368:

⁴³ Նոյն, էջ 369-70:

մասնակի ազատութիւն մարդը կարող է ձեռք բերել, փոխալ դէպքում՝ Հայկազուն Ազատեանը: Համարեա ձեռք է բերել, մնում է, որ Հայաստան, հայութիւն խնդիրները սրտին մօտ չառնի: Բեռ են Հայաստանն ու հայութիւնը՝ մարդու գլխին հազար ու մի հոգս կապող: Ազատութեցիր, ազատ ճախրում ես ... Վար է միայն այն, որ Հայկազուն Ազատեանի զաւակները, թոռն ու ծոռը, երբ մոռացուած կը լինի նրանց ծագումը, այլեւս ոչ մի փեսակէտից ազատ հայ չեն լինի՝ սոսկ անազատ եւրօլանդցի Իրօք, արժի՞ այսքան դրամատիկ, այսքան հեռու նայել: Վերջին հաշուով Հայկազուն Ազատեանը մի կեանք ունի, այսուհետ, բոլոր փորձութիւնները անցնելուց յետոյ՝ ազատ հայի կեանք»⁴⁴:

Ահա այսպիսի տխուր վերջաբան՝ ոչ-ուրախ հանգամանքների պարտադրանքով իր պահովութիւնը կերտած հայի համար: Եւ որ անելի տխուր է՝ հենց այսպիսի «կայացած» տարագիր հայերն են այն հրապուրիչ խայծը, որով գայթակղում եւ տարագրութեան ցուպին են ձեռք մեկնում հայրենաբնակ հայորդիները:

Ինչպէս նկատում ենք, *Ազատ հայը* վէպի դիպուածաշարում կարեւոր դեր է վերապահուած համակարգչին, համացանցին: Վահագն Գրիգորեանն առհասարակ գործողութիւնների ընթացքի, գաղափարախօսութեան արտայայտման կարեւոր տիրոջ է դարձնում առցանց հարթակը: Սա վկայում է, որ մեր կեանքը, մեր նիւթեղէն իրականութիւնն այլեւս անբաժան է օր օրի իր գերիշխանութիւնը մեզ պարտադրող համացանցից: Բայց ասել, թէ Գրիգորեանը բացարձակացնում է այս երեւոյթը՝ չենք կարող, որովհետեւ նրա գրականութիւնը սնում է անցեալից չկտրուող հայեացքով: Այս են վկայում նրա գրեթէ բոլոր գործերում հանդիպող հնամեայ լուսանկարները, մէջբերումները պատմական վաւերագրերից, տարատեսակ գրագրութիւններից:

Հայկազուն Ազատեանը եզակի իրողութիւն չէ հայի մերօրեայ ողիսականում: Իրաքանչիւրս այսօր ունի իր բաժին 'ազատ հայը' ծանօթ կամ, որ առանել սարսափելի է, արինակից, եւ նրանց կեանքի ճանապարհային քարտէզը որեւէ կերպ չի զանազանում Հայկազուն Ազատեանին վիճակուած տխուր քարտէզից: Գոնէ հիմնականում այդ քարտէզի գծերն ու զիգզագները համընկնում են, ու անձնական յուսահատութեան չափաբաժինը իրաքանչիւրիս կեանքում դրանից անելի է խտանում: Ասել է թէ՛ Գրիգորեանի բազմաբեւեռ հայեացքը իմի է բերում աշխարհի տարբեր ծագերում սփռուած հայերի տարաբախտութեան բոլոր հանգուցաթէլերը եւ շեշտադրելով կորուստների ահագնութիւնը՝ սթափուելու ու անդառնալի ընթացքից ետ կանգնելու պատգամ հնչեցնում:

⁴⁴ Նոյն, էջ 370:

ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ

Վահագն Գրիգորեանի *Պօղոս-Պետրոս* վէպը հայ պատմութեան վերջին 200ամեակի քննական վերլուծութիւնն է, որում միախառնուածներհիաուած են գեղարուեստական պատումնաշարը եւ պատմական-քաղաքական անցքերի փաստագրուած յաջորդականութիւնը:

Յաճախ ընթերցողի համար դժուար է լինում կողմնորոշուել, թէ վէպում ծաւալուող պատումի ո՞ր գիծն է գերակայօրէն իրեն առաջ մղողը՝ պատմական դէմքերին եւ պատմաքաղաքական անցքերի՞ն, թէ՞ վիպական հերոսներին ու նրանց հանգրուան 5րդ փողոցին առնչուողը: Ինչպէս արդէն նշել ենք *Ժամանակի գեպը* վէպի վերլուծականում, 5րդ փողոցը փոխաբերական նշանակութիւն ունի Գրիգորեանի ստեղծագործութեան մէջ, եւ *Պօղոս-Պետրոս* վէպը բացառութիւն չէ: Աշխարհի որ ծագերում, որ ժամանակաշրջանում էլ կատարուեն գրողի շարադրած պատմութիւնները, միեւնոյն է գալիս-յանգում են 5րդ փողոցի մատոյցներին եւ այստեղ ստանում միս ու արիւն: Այս փողոցի մասին եւս մէկ նկատառում մէջբերենք Քալանթարեանի յօդուածից.

5-րդ փողոցը դառնում է ընդհանրական կեանքի մանրակերտը, որտեղ խաչածեւում են անցեալն ու ներկան, չարն ու բարին, մարդկային ճակատագրերը: Փոքրիկ փողոցը լայնանում, անսահման մեծանում է, որի բնակիչների զգալի մասը թողել է ծննդավայրը եւ փրկութիւն գտել այստեղ, այս փողոցում՝ իր հետ բերելով անցեալի յուշերը: Նրանց սերունդները տարածում են աշխարհով մէկ, բայց ժամանակ առ ժամանակ վերադառնում են իրենց արմատները եւ ինքնութիւնը փնտռելու հարազատ փողոցում: Այս ճանապարհով փողոցը աստիճանաբար վերածում է ոչ միայն քաղաքի, այլեւ հայրենիքի, իսկ մարդիկ՝ ազգութեան խորհրդանիշի...Ստացում է, որ թէ՛ ուղղակի, թէ՛ փոխաբերական իմաստներով 5րդ փողոցը հայութեան իւրայատուկ կենտրոնն է, ուր խաչածեւում են բնակիչների անցեալն ու ապագան⁴⁵:

Այս վէպում հաւասարագոր կարեւորութեամբ կողք կողքի են շարքային մահկանացուների մի ողջ բազմութիւն-բազմազանութիւն եւ հայոց պատմիչներ Եղիշէն, Կորիւնը, Կողբացին, Ուռհայեցին, կաթողիկոս Ներսէս Աշտարակեցին, ռուս ցար Նիկոլայը, զօրավար Պասկեւիչը, նախախորհրդային, խորհրդային, յետխորհրդային հայ, վրացի, ադրբեջանցի քաղաքական գործիչներ՝ իրենց դերերով: Պատմութեան փաստագրած 200 տարուայ արձանագրութիւններին ուղղուած «Յետադարձ հայեացքի» համապատկերում երեւան է ելնում Մետրոպեանների եւ Տիրատուբեանների՝ սովորական հայկական գերդաստանների, չարչրկուած ողիսականը, որ հիմնականում սկիզբ է առնում Աբգարդպիր վարդապետից ու շարունակ-

⁴⁵ Քալանթարեան:

ումը Մեսրոպ վարդապետ Մեսրոպեան, Մովսէս, Պօղոս, Պետրոս, Պարգեւ, Նուէր, Լուսինէ, Արեգ Տիրատուրեաններ ժառանգորդութեամբ:

Վիպագիրը իր հերոսներին անցկացնում է պատմական թոհուրօհի ամենաթէժ ոլորաններով, եւ նրա հայեացքը՝ սառնասրտօրէն անաչառ, տեսնում ու ցոյց է տալիս մերկապարանոց իրականութիւնը՝ սթափուելու կոչ հնչեցնելով իր հայրենակիցների ականջին: «Մեր ազգը ... վաղուց ի վեր երկու հիմնական զբաղմունք ունի. նախ՝ թեւերը քշտած քանդում է իր փունը, յետոյ՝ ւաերակները ողբում, քանզի մենք մոռացել ենք, թէ փունը ինչպէս են շէն պահում»⁴⁶ գրում է հեղինակն իր վէպի առաջին՝ «Կանգառ առաջին. վարք Աբգարդպիր վարդապետի» բաժնում: Կանգառները վէպում հինգն են. վերը նշուածին յաջորդում են «Կանգառ երկրորդ. յանուն բոլոր ճնշուածների ու հալածուածների», «Կանգառ երրորդ. խորհրդատուր ընթերիք», «Կանգառ չորրորդ. լոյսը բացուի, բարին հետը», «Կանգառ հինգերորդ. Տէր, Դու մեզ փրկիր բարեկամից» բաժինները: Վէպն ունի նաեւ առաջաբան՝ «Նախաբան. ցաւօք, ոչ լաւարեսական» վերնագրով, եւ...՝ «Վերջաբան. ինչպէս մեզ փրկենք մեզնից» վերնագրով:

Մեր արհնտտ պատմութեան ընթացքը՝ մեզ ամանդուած դասագրքային եւ ոչ-դասագրքային իրողութիւններով, լի է հակասական, անընկալելի փաստերով: Եւ Վահագն Գրիգորեանը ճիգ է անում տարրորոշել պատմական կոչուող ճշմարտութեան ու պատուիրուած ճշմարտութեան սուրսայր եզրագծերը՝ չխնայելով ո՛չ այդ եզրագծերին յայտնուած իր հերոսներին, ո՛չ իր տարրորոշումներին հետամուտ ընթերցողին: Մեր արտաքին թշնամիները՝ թուրքը, ադրբեջանցին, վրացին, ռուսը, այլք, այնքան սարսափելի չեն ներկայանում յաճախ, որքան ներքին թշնամին՝ հայութեանն ու Հայաստանը սկուտեղի վրայ արտաքին թշնամիներին մատուցող ստրկամիտ, անձնապաշտ, իրենց ինքնութիւնից օտարուած իբրեւ թէ հայերը:

Ողջ պատումաշարը երեւան է հանում սարսեցնող դիպուածներ եւ դրանց մասնակից գրական հերոսներ, որոնք դատապարտուած են դառնալու աշխարհաքաղաքական ցնցումների աննշան թուացող մահկանացու-զոհերը՝ անկախ այն բանից՝ նրանք կարետոր դեր եւ առաքելութիւն ստանձնած, իրենց կեանքի գիծը ըստ ժամանակի բարձր նպատակների համահունչ կառուցած մարդի՛կ են, ինչպէս հանրապետական բանակի սպայ Կարապետը, որ սպանում է իր զինուոր հայի գնդակից, կամ Սերգօ Սնիսեանը, որ բոլշեփկեան գաղափարախօսութեան առաջամարտիկն է, բայց ստիպուած է գիտակցել 30ականների ուռճացող գեհե՛նի ահաւորութիւնն ու կոռակիցներից, պաշտօնակիցներից գաղտնի Ներքգործողկամատի աշխատասենեակում խմել հերթական անմեղ զոհի ողորմաթասը,

⁴⁶ Վ. Գրիգորեան, *Պօղոս-Պեպրոս*, Անտարէս հրատ., Երեւան, 2019, էջ 9-10 (վէպի յետագայ քաղուածքները՝ այստեղից):

թէ՛ պատմաքաղաքական անցուդարձերին անմասն, սիրոյ եւ երջանկութեան սպասմանն ապաւինած դեռատի Թամարը՝ դուրս նետուած սեփական տան պատուհանից՝ թուրք գազաններից փրկուելու համար, կամ իրեն ընդամէնը մէկ օր կին զգալու շռայլութիւնը թոյլ տուած, ցեղասպանների ձեռքից հրաշքով փրկուած Սիրունը, որ պիտի այդ մէկօրեայ կանացի սեթեւեթանքի համար վճարէր շատ թանկ գին՝ բռնաբարուէր իր փրկարար-ասպետի կողմից եւ երեխայ ծնելուց յետոյ մեռնէր հայ չեկիստների խոշտանգումներից, չհասցնելով վայելել մայրութեան բերկրանքը:

Հիւանդ ժամանակներում բոլորն էին դատապարտուած, բոլորն էին զոհ: Եւ եթէ բախտի միջանկեալ շողարձակումներ, այնուամէնայնիս, նկատուած են վէպի հերոսների կեանքում (ինչպէս օրինակ՝ ծերացած Արշալոյսի կեանքի վերջին տարիները նկարագրող հատուածում), ապա վիպասանը մեզ իսկոյն մատուցում է գեղարուեստական շարադրանքին զուգընթաց զարգացող քաղաքական դիպուածաշարը, որը չի թողնում լաւատես լինելու որեւէ հիմք:

Ի՞նչ ենք կարդում՝ իբրեւ մեր ազգին պատուհասած արհաւիրքների «քննական» վերլուծութիւն, որի մեկնարկը տրուած է Աբգարոպիր վարդապետի գրառումներում եւ շարունակուած է նրա եղբօրորդի Մեսրոպ վարդապետ Մեսրոպեանի՝ մէկ դար անց շարադրած «Քննական պատմութիւն հայոց»ում, որին վիճակուած է նոյն ճակատագիրը, ինչ դրա հեղինակին եւ ողջ հայ ժողովրդին: Քննական հայեացքն ուղղելով նախորդ դարասկզբի իրադարձութիւններին՝ Վարդապետը գրում է. «... դժուար է, եթէ ոչ անհնարին գտնել ուրիշ երկու ասես իրար քթից ընկած երկուորեակ պետութիւն, ինչպիսիք են Ռուսաստանն ու Թուրքիան»⁴⁷:

Տասնամեակներ անց, սեփական փորձառութեամբ, այս միտքը պէտք է ձեւակերպի Վարդապետի շառափղ, դրամատուրգ Պօղոս Տիրատուրեանը՝ ռուս «եղբայր» գործընկերների հետ ունեցած անմիջական շփումների վերջնարդիւնքում. «*Բոլորին ռուսները նուածել են արիւնով ու սրով, մեզ՝ մեր օգնութեամբ, բայց դրանից մենք շահե՞լ ենք: Ամէնեւին: Ռուսը մեզ խփում է թիկունքից: Մեր համակրանքը շահում՝ մեզ դաւելով: Մեզ համար զանազան որոգայթներ լարում, ապա իբրեւ թէ օգնութեան ձեռք մեկնում: Հայաստանը ռուսներին պէտք է՝ թուրքերի հետ քաղաքական առեւտուր անելու համար: Դա լաւագոյնս ապացուցեցին բոլշեւիկները, հիմա էլ ապացուցում են ռուս կայսերամուլներն ու հայ ազգադաւանները»⁴⁸:*

Վերջիններին՝ ազգադաւանների վրայ բաւական հանգամանօրէն է կանգ առնում հեղինակի հայեացքը եւ, թերեւս, նրա գաղափարաբանութեան շեշտը այդ տեսակի զազրելիութեան բացայայտումն ու նզովումն է:

⁴⁷ Նոյն, էջ 517:

⁴⁸ Նոյն, էջ 501:

Ներսէս Աշտարակեցուց ծայր առած, միկոյեաններով ու «միկոյեանական լիմիտներով»⁴⁹, մուղղուսիներով, անկախհայաստանեան «գերակաշահականներով» շարունակուող, մոսկուաբնակ Կիռակասեաններով ամբողջացող ազգութացների մի ողջ պատկերասրահ է ներկայացնում Գրիգորեանը: Իդէպ, այս տեսակի մեզ շատ ծանօթ ու արդիական օրինակ է Գէորգի Կիռակասեան կոչուած հերոսը. հենց այսօր դրա նմաններին մենք ճանաչում ենք յականէ-յանուանէ: Եւ այս տեսակը իրեն համարում է Իսրայէլ Օրու սրբազան գործի հետետորդն ու նուիրեալը՝ այդպիսով արդարացնելով սեփական ինքնութեանը դաւաճանելու, ազգն ու հայրենիքն ուրանալու իր «սխարանքը»: Ազգադասների այս շղթան շնչահեղձ է անում ընթերցողին: Յետո՛յ ինչ, որ վիպական գործողութիւնների բոլոր դրուագներում էլ հեղինակն ինչ-որ հնար գտնում է՝ մխիթարելու կամ յուսադրելու:

Կարդում ես ազգիդ հեռու եւ ոչ այնքան հեռու անցեալի տարեգրութիւնն ու սարսափած բախում այն անհերքելի փաստին, որ հենց հիմա էլ՝ երէկ, այսօր, անվիճելիօրէն ու ցաւօք՝ նաեւ վաղը նոյն իրականութիւնն է: Ո՛րն է այս դաժան տեղապտոյտից ազատագրուելու հնարը, երբ վէպի դիպուածաշարը եզրափակում է ոչ-յուսադրող հեռանկարով, երբ երկու հայորդի՝ Պարգեւ ու Նուէր Տիրատուրեանները, դատապարտուած են դաժան ճակատագրի (հեղինակը խնայում է մեզ ու չի որոշակիացնում նրանց ճակատագրի վերջին արարը), ազատատենչ ու ազնիւ Տիրատուրեան ցեղի մէկ այլ շատափղ՝ Արեգը, բանտում է՝ իր պետութեան եւ ժողովրդի ազնիւ նպատակների շեփորահարը լինելու «մեղքի» համար: Անօգնական երկու ծերունի՝ իրենց կանանց հետ, դատապարտուած են անիմանալիւ-առեղծուածայինը որոնելու եւ իրար դիմելու մեր բանահիւսութիւնից յայտնի-փակուղային հարցով.

- Պօղոս, գտա՛ր:
- Չէ՛:
- Պետրո՛ս, գտա՛ր:
- Չէ՞⁵⁰:

Վէպի խաչաձեւուող բազմատարր հանգոյցները լուծելու իրակերպ հնար է բանեցրել հեղինակը՝ պատմաքաղաքական իրողութիւնները վեր հանող «Քննական պատմութիւն հայոց»ին ուղղուող «Յետադարձ հայեացքը» տեղայնացնելով նաեւ իր հերոսների նեղ անձնական ճակատագրերի տիրոյթում: Այսինքն՝ «Յետադարձ հայեացքը» տեղ-տեղ դադարել է Գրիգորեանի հերոսների «մենաշնորհը» լինելուց, հեղինակն ասես «ընդօ-

⁴⁹ Ռուսերէն բառ, թարգմանաբար՝ սահման: «Միկոյեանական լիմիտներ» արտայայտութիւնը վերաբերում է ստալինեան բռնաճնշումների շրջանին, երբ Աւքանազ Միկոյեանը պահանջում էր մեծացնել Հայաստանից ակնկալուող զոհերի թիւը՝ յանուն խորհրդային երկրի բարօրութեան:

⁵⁰ Նոյն, էջ 530:

րինակել է» իր հերոսների վարքը՝ ընթերցողին մատուցելով եւս մէկ՝ հեղինակային «Յետադարձ հայեացք»: Այդ հայեացքի հետքով վիպասանը լոյս է սփռում այն անցքերի եւ դրանց մասնակից կերպարների ճակատագրերի վրայ, որոնց մասին կա՛մ ընթերցողը, կա՛մ միւս գրական հերոսները չունեն որոշակի տեղեկութիւն: Այսպէս, յետին թուով, ասես պատահական դիպուածների հանդիպադրմամբ պարզ է դառնում, որ իր զինուորի գնդակից զոհուել է Մետրոպ վարդապետի եղբորորդի Կարապետը, որ Մովսէս Տիրատուրեանի Պօղոս եւ Պետրոս որդիներից մէկը որդեգիր է, որ Սիրունի տանը եղած հիւրերն են Մովսէսի, Սերգոյի, Սիրանի մահուան հանգամանքների ականայ մեղաւորները են. եւն.:

Վահագն Գրիգորեանը լեզուաոճական բազմաշերտ բաղադրիչներով է կառուցում իր գիրը: Նրա բառամթերքը ներառում է վերամբարձից մինչեւ կենցաղային-առօրեական, բանահիւսականից մինչեւ գերարդիական, պաշտօնականից մինչեւ հայիոյախօսութիւն ձգուող եզրոյթներ: Նոյնքան բազմաշերտ է պատումի տրամադրութիւնը, մատուցման դիտակէտը: Պօղոս-Պետրոսը ինչպէս եւ Գրիգորեանի գրականութիւնն առհասարակ շատ սահուն ելեւէջումների մէջ է ողբերգականի, դրամատիկականի, կատակերգականի տիրոյթներում:

1921ի ռուս-թուրքական բանակցութիւնների շրջանը ներկայացնող հատուածում՝ մոսկովեան *ժիզն Նացիոնալնոսպէ*⁵¹ պարբերականում արուած հրապարակման քաղաւածքների պատկերին, փայլում է Գրիգորեանի հումորը, որն այնքա՛ն յիշեցնում է ողբերգութիւնից զաւելջտ յօրինող Գուրգէն Մահարու գրիչը. «Ուրեմն, Հայաստանը՝ որպէս «սովետական-սոցիալիստական պետութիւն, պէտք է գնայ իր փարածքների եւ նոյնիսկ իր ազգակիցների որոշ խմբերի զոհաբերութեան»: Յանուն ինչի՞: «Յանուն համաշխարհային յեղափոխութեան»: Քանի որ յատկապէս բութ ծնուած հայերը կարող է ասեն՝ լա՛ւ, տարածքները հասկացանք, զիջենք, բայց նոր կոտորածները շատ չեղա՛ւ, դարձեալ վերին աստիճանի համոզիչ բացատրութիւն. «Եթէ մենք հաւատում ենք համաշխարհային յեղափոխութեան յաջողութեանը (իհարկէ հաւատում ենք, ամօթ չի՞ չհաւատանք), ապա պէտք է հասկանանք, որ բոլոր այդ զոհաբերութիւնները ժամանակաւոր բան են, որ համաշխարհային յեղափոխութեան յաղթանակով չեղեալ են դառնում»: Ի՞նչ է ասել՝ «չեղեալ»: Այսինքն՝ նոյնն է, թէ չեն եղել: Հայկական կոտորածները չե՞ն եղել: Այո: Ինչպէ՞ս: Շատ պարզ, «համաշխարհային յեղափոխութիւնը յաղթանակից յետոյ կը քննի եւ կը գտնի հողի իրաքանչիւր կտորի իսկական տիրոջը՝ յանձին նրա վրայ աշխարհող աշխարհաւորի»: Կը գտնի՞, ո՞նց, չէ՞ որ հայերը արդէն կոտորուել են: Է՛, դժուար էք հասկանում, հայերը, այո՛, կոտորուել են, բայց թուրքերը հո

⁵¹ Ռուսերէն բառակապակցութիւն, թարգմանաբար՝ ազգութիւնների կեանքը:

կան, ի՞նչ փարբերութիւն՝ հայ աշխարհատուրը կը լինի հողի տէրը, թէ թուրք: Իրօք, իրօք, ոչ մի փարբերութիւն, մենք՝ հայերս, կարող ենք ընդհանրապէս չլինել, վերանալ աշխարհիս երեսից, եթէ սա կը նպաստի համաշխարհային յեղափոխութեանը: Կեցցէ՛ք, վերջապէս հասկացաք, բայց ձեզ լրիւ զոհաբերելը դեռ շուտ է. մի բան էլ չմնայ՝ ապագային»⁵²:

Իսկ Պօղոս եւ Պետրոս Տիրատուրեանների՝ Պապիկ Մորոզովի⁵³ վեհ օրինակին հետեւելու, աւագ ջոկատավարի ղեկավարութեամբ կենդանաբանական այգի այցելելու, Պօղոս-Պետրոս սրբերի՝ Սիրանի տանը հիւրընկալուելու հատուածները պարզապէս գեղարուեստական գոհարներ են, որ իրաւամբ կարող են դիտուել իբրեւ վիպական պատումից առանձնացող, բայց ոչ՝ դրան չներդաշնակող ամարտուն ստեղծագործութիւններ:

Վիպասանը գրեթէ ոչ մի պատում, ոչ մի դիպուած չի հիւսում առանց ենթատողերի, առանց պատճառահետեւանքային կապի շարակցութեան: Վէպում առանցքային տեղ ունի Պօղոս-Պետրոս եկեղեցին քանդելու հատուածը: Սա ինքնին, իբրեւ իրողութիւն, այնքան ընդգրկուն նիւթ է պարունակում, այնքան հաւաստի տեղեկագիր է խորհրդային բարքերի վերաբերեալ, որ, թում է, այլեւս կարիք չկայ խտացնելու գոյները, շեշտադրելու կատարուած բարբարոսութեան ցցուն փաստը: Բայց բանահիսական, ամանդապատումային ոճով շարադրուած այս պատմութիւնը գրողն ամարտում է բիրտ իրապաշտական լուծումով. քանդուած եկեղեցու ակերակների միակ հաւատաւորը՝ Գրիգորեանի վէպի ամենամանկը (եթէ չասենք՝ անմեղսունակ) հերոսը՝ Սիրունն է դառնում աստուածուրացութեան զոհը. անմեղութիւնը թաղում է բիբլիական ոճի փլատակներում:

Եւ ի՞նչ է մնում անել հեղինակին՝ ի սէր ընթերցողի կամ գուցէ ի սէր ինքն իրեն՝ շնչահեղձութեան յաղթականօրէն աճող չափաբաժնից վերջնականապէս չխեղդուելու համար. նա պատմութեան դառնահամ դեղահաբերին հակադրում է հեքիաթի անուշաբոյր նեկտարը: Երկինքից երեք խնձոր վայր բերելու յանգոյն՝ Վահագն Գրիգորեանը երազ է տեսնում՝ իրապատում վերաջաքանով. փրկուած է Տիրատուրեանների առեւանգուած «թալիսմանը, տոհմական մասունքը»՝ Վարդապետի «Քննական պատմութիւն հայոց»ը, որ տուն է վերադառնում թուացեալ կորսուած, արմատից հատուած ընծիտի՝ Լուսինէ Տիրատուրեանի ձեռամբ: Եւ որպէսզի կասկած չմնայ ընթերցողի ու հենց իր՝ Վահագն Գրիգորեանի մէջ, թէ սա իրողութիւն է՝ մեր բազմադարեայ պատմութեան բոլոր քառուղիներում հաստատագրուած, հեղինակը պատկերագրում է աշխարհակործան ջրհեղեղին յաջորդած վերածնութեան խորհուրդը՝ կտուցին կանաչ շիւ բերող ա-

⁵² Նոյն, էջ 204-5:

⁵³ Ռուս «հերոս» պիոներ, որի օրինակով դաստիարակում էին խորհրդային պատանիները:

ղանու տեսքով: «Քիչ հեռում՝ մարգախոսորի մէջ, կանգնած է աղանին՝ կրուցին դալար շիւ: Վիզը թեքած՝ փոքր-ինչ կասկածանքով նայում է վաղաժամ անցորդին, ապա համոզուելով, որ վրանգ չկայ, շիւր առած թեւածում: Լուսինէն, իհարկէ, տեղեակ է, թէ ինչն ինչոց է ... իսկ մենք, որ նախանձելի համբերութեամբ անցել ենք այս ճամփորդութեան ոչ-քիչ էջերով, յիշողութիւնից էլ չենք դժգոհում, սա ընկալենք որպէս նախերգանքը մեր երագի արթմնի շարունակութեան»⁵⁴ աւարտում է վէպը հեղինակը:

Այս լուստեսութիւնը, հայի ապագայի հանդէպ հաւատը Վահագն Գրիգորեանի գոնէ գրական հաւատամքն է: Անգամ սեփական մահուան փաստը նա մեկնում է ոչ թէ իբրեւ ողբերգական աւարտ, այլ նոր կեանքի սկիզբ: Այս դիտարկումն առկայ է նրա ստեղծագործական յղացումների բազմաթիւ օրինակներում: Դեռ 2001ին գրուած «Անմահը» պատմուածքում կարդում ենք. «... ես երրորդ հազարամեակի առաջին տարում լերդացող արեանս մէջ պառկած մտածում եմ՝ յաջորդ անգամ ե՞րբ, որպէ՞հ, որպէս ի՞նչ ու յանուն ինչի՞ եմ լոյս աշխարհ գալու: Տրամադրութիւնս այնքան վայր է, որ էլ չսասած, բայց յիշում եմ նախորդ մահերս եւ, պատկերացրեք, համարեա մխիթարում եմ»⁵⁵:

Այս մխիթարութեանն ապաւինելու երերումի մէջ էլ փորձենք մտածել, որ մեզ վիճակուած է բազմադարեայ տեղապտոյտ՝ ելքի հեռանկարով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս ուսումնասիրութեամբ անդրադարձանք անկախութեան շրջանի ոչ-քիչ վիպագիրներից միայն մէկին՝ բնաւ չթերագնահատելով միւս ժամանակակիցներին: Հայ արդի գրականութիւնն իր բազմաշերտ դրսեւորումներով մէկ հրապարակման մէջ ամփոփելն անհնար է, բնականաբար, ինչպէս որ անհնար է հենց մէկ գրողի, մասնաւորապէս՝ Վահագն Գրիգորեանի գրականութեան սպառիչ վերլուծութիւնը թէկուզ եւ այսպիսի ծաւալուն ուսումնասիրութեան շրջանակներում:

Այս ուսումնասիրութիւնը գրելու շարժառիթը, ոչ միայն արդի հայ գրականութեան նշանակալի դէմքերից մէկի գրականութիւնը տեսականօրէն արժեւորելու մղումն էր, այլեւ թաքուն յոյսը, թէ այս գրականութեամբ կը հետաքրքրուեն մարդիկ, որոնք կը կարողանան նպաստել, որպէսզի թարգմանուեն եւ աշխարհի տարբեր լեզուներով հասանելի լինեն Գրիգորեանի երկերը, յատկապէս՝ *Ժամանակի գեպը*: Այն տազնապը, որ *Ժամանակի գեպը* (մղձաւանջ-տեսիլքում) հնչեցնում է Գրիգորեանը, պար-

⁵⁴ Նոյն, էջ 531:

⁵⁵ Վ. Գրիգորեան, *Կշեռքը*, ՀԳՄ, Երեւան, 2018, էջ 9-10:

փակուած չէ սոսկ հայկական տիրոյթում: Սա չափազանց իրատեսական կանխագուշակութիւն է, որից պիտի հետետութիւններ անի աշխարհը:

Վահագն Գրիգորեանի գրականութիւնը հայ ժողովրդի վերջին հարիւրամեակների եւ ներկայի պատմութեան բազմաթիւ շերտերն է բացում, վերլուծում ու նաեւ կանխագուշակում մեր ընթացքի հնարաւոր ելքերը: Նա ընդամէնը գեղարուեստական պատումաշար չէ, այլ իր գիրը հիմնաւորում է փաստագրութեամբ, պատմական յայտնի իրողութիւնների մէջբերումներով: Եթէ *Առաջնորդի կեանքն ու մահը* եւ *Ազապ հայր* վէպերում նա այսօրեայ իրականութեան արտացոլողն է, ապա *Ժամանակի գեպը* եւ *Պօղոս-Պետրոս* վէպերում, նկարագրելով ներկան, այդ ներկայի արմատները բխեցնում է մեր պատմական անցեալից եւ ժամանակների ու հայի ճակատագրի ընթացքի մասին պատմում է առաւել ընդգրկուն կերպով: Նրա պատկերած Տրդ փողոցը գրական այն տարածքն է, որում ծաւալում են բոլոր վիպական գործողութիւնները: Եւ եթէ անգամ դրանց մի մասը կատարուել են ոչ-յատկապէս Տրդ փողոցում միեւնոյն է, բազմաթիւ թէլերով կապուած են այդ փողոցի հետ, որովհետեւ դա հենց հայի ու Հայաստանի խորհրանիշն է Գրիգորեանի ստեղծագործութեան մէջ:

**THE ARMENIAN NOVEL BETWEEN 1991 AND 2020:
THE CASE OF THE NOVELIST VAHAGN GRIGORYAN**

(Summary)

KARINE RAFAELYAN (karine.rafaelyan@mail.ru)

The article focuses on the literary work of Vahagn Grigoryan, one of the most prominent contemporaneous Armenian novelists.

The papers highlights the latest four novels of the author, namely *The Life and Death of the Leader*, *The River of Time*, *The Free Armenian*, and *Poghos-Petros*. In both of the novels *The Life and Death of the Leader* and *The Free Armenian* the stories are woven around the image of the same hero, who appears in different situations during the period of independence. The other two novels highlight handpicked episodes of Armenian history, which become the background upon which the novelist raises a number of critical current issues which have to do with the Armenian Genocide, the survival of the Armenian nation and the prospects of Europe's religious identity and the shifts in its value system.